


ԴՐՈՇՆԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԼՐՏԵՍ ԱՐՏԱՇԷՍԻ ՍՊԱՆՈՒՄԸ

Կ Պօլսի Կօմիտէի որոշմամբ մահի դատապարտեցաւ լրտես Արտաշէսը: Աճիւղ գործադրեցաւ ամենայն յաջողութեամբ:

ԻՐԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՅՆ Է

Յունիս, 1895 թ.

Իրերի գրութիւնը Հայաստանում մազաչափ անգամ չի փոխուել, թէև հակառակ լուրեր են պտտում: Հայ ժողովուրդը ենթարկած է նոյն պայմաններին, ինչ որ մի քանի ամիս, մի քանի տարի առաջ էր: Բաւականանալը այս անգամ միայն երկու փաստով:—

Երկրի ամենամեծ չարիքներից մեկը—հարկահանութիւնը, որ ժողովրդի տնտեսական քայքայման գլխաւոր պատճառներից մէկն է, շարունակուում է աւելի եռանդուն կերպով, քան երբ և իցէ: Հարկահաւաքները զապթիաներով և զինւորներով ցրել են երկրի բոլոր կողմերը ու ամենայն եռանդով հաւաքում են հարկերը և այն էլ ոչ թէ մի տարւանը, այլ մի քանի տարւանը միանգամից: Տեղի ունեցող տեսարանները աւելի սարսափելի են, քան նախկին տարիներինը, որովհետև ժողովուրդը տնտեսապէս ծայրայեղ աղքատութեան մէջ է—չունի հաց, չունի հագուստ. եղած չեղածը թալանել, տարել են, այրել ու աւերակ են դարձրել: Ժրտեղից տայ, ինչ տայ: Մերկութեան ու քաղցածութեան պատճառն էլ ինքը կառավարութիւնն է. բայց և այնպէս նա ողորմած արար պահանջում է մի քանի տարւայ հարկերը միանգամից: Ինչ հօգն է, թէ ժողովուրդը ոչինչ չունի: Եւ ժողովուրդը իւր անկարողութեան համար ենթարկուում է ամեն տեսակ տանջանքների, լիկանքի—նոյն մարմնական տանջանքները, նոյն բռնաբարութիւնները, դեռ աւելի շնային կերպով:

Այդ թշուառականը, որ դեռ շարունակուում է իւր շա-

հատկութիւնները, շարունակում է նոյնպէս և դեռ կոտորել սասունցիներին, այժմ էլ քաղցով: Սասունցուն օգնութեան է հասնում մի „անտեսանելի ձեռք“, որ նա քաղցից չմեռնի, որ նա չվհատուի, չընկնի իւր բարձրութիւնից, անայ նոյն ազատասէրը: Առաւելարութիւնը իմանում է այդ և պտտի է ենթարկում սասունցուն, որովհետև վերջինս ընդունում է այդ օգնութիւնը, չի ուզում քաղցից մեռնել: Առջեմանի կառավարութեան օրէնքով „հպատակների“ մի մասին արգելում է ապրելը և ով որ դրանցից կապրի, կաշխատի իւր գոյութիւնը պահպանել, նա ճանաչուում է իրրե քաղաքական յանցաւոր, որի համար և կրում է արժանի... պատիժը:

Եւ հասկանալի է: Այդպիսի մի հրեշտային մարմին, ինչպիսին սուլթանի կառավարութիւն կոչուածն է, այլապէս վարել չի կարող: Զգալով որ հեռագիտե մտնենում է իւր վախճանը, որ այսօր թէ վաղ պիտի վերջ դնի իւր լեշակեր թագաւորութեան, ուստի անյազ գազանի նման ընկնում է անպաշտպան ժողովրդի վրայ իւր վրէժը լուծելու:— Խաճում, յօշոտում է, և դրա մեջ է գտնում իւր սփոփանքը, դրա մեջ նա զգում է մի հօգեկան բաւականութիւն, թշուառական:

Եւ այս դէպքերը տեղի են ունենում հենց այն ժամանակ, երբ սուլթանի կառավարութիւնը, իբրև մարդասպան, նստեցրած է ոճրագործի նստարանի վրայ, երբ փաստերով ու դօկումենտներով ապացուցած ու հաստատուած է, որ ինքն է հեղինակը այն բազմաթիւ բռնարարութիւնների, կեղեքումների, տանջանքների, կոտորածի և այլն, որին ենթարկւած է գլխաւորապէս ու առանձին մի նպատակով հայ ժողովուրդը, երբ ամբողջ աշխարհին ակնյայտի կերպով ցոյց է տուած, որ պղծ հրեշտը, լեշակերը կատարել է երկար տարիների ընթացքում անթիւ ոճիրներ, հանցանքներ և երբ դեռ եւրոպական երեք պետութիւնների ներկայացուցիչները գտնուում են հենց ոճիրներ կատարուած վայրում ու շարունակում են իրենց խուզարկութիւնը:

Այս ցոյց է տալիս նորից այն, որ սուլթանի կառա-

վարութիւն կոչուածը ոչ միայն մի անպատկառ, անամօթ մարմին է, այլ և լիբու ու յանդուգն մի հրէշ: Եւ դեռ այսպիսի մի կառավարութիւն պիտի շարունակի ապրել, գոյութիւն ունենալ, նա պիտի շարունակի լինել Հայաստանի նրա և ժողովուրդների «տէրը», «իշխողը», պիտի ձանաչէ նրա պետի «Վեհապետութիւնը» (Souveraineté)

Ոչ բաւական է Հայաստանի ներկայ ընթացիկ պետք է արժատապէս փոփոխել և նրա վեհապետը պիտի լինի ինքը ժողովուրդը: Ինքը ժողովուրդն է ամեն ինչ և նրանով պիտի լինի ամեն բան: Ինչ որ կատարուած է, կը կատարուի առանց նրան, ոչ մի ոյժ, ոչ մի կշիռ չի ունենալ և չի կարող համարուիլ օրէնք, այլ բռնութիւն, խարաղան, բռունցք, ինչ որ էլ գոյութիւն ունի այժմ և որի դէմ էլ կուրծի է ժողովուրդը: Մի որ և է երկրում, այն ժամանակ միայն կարող են տիրապետել ժողովուրդին պենչալի պայմանները, երբ, կրկնում ենք, երկրի տէրը, իշխողը, վեհապետը ինքը ժողովուրդն է: ամեն ինչ ժողովուրդով, ամեն բան ժողովուրդի համար: Կհա երբ երկիրը կարող է լինել բախտաւոր, իսկ նրա բնակիչները երջանիկ

Ն Ա Մ Ա Ն Գ Օ Լ Մ Ի 8

Արտաշէսը բնիկ պոլսեցի էր և ոստիկանութեան լրտես ու յայտնի մասնիչ:

Լրտես Արտաշէսը իր շահատակութեան գլխաւոր սպարէզ ընտրած էր խեղճերու, արհեստաւոր և մշակ դասակարգի հասարակութիւնը, որուն կը հետապնդէր ամեն տեղ, սրճարաններու մէջ, թէ արհեստանոցները, հանրային գեղարձութեան վայրերէն սկսած մինչև խաներու մութ անկիւնները, ուր կապաստանի պանդուխտ հայաստանցիներ: Իբրև մասնագէտ լրտես, իր գործին տէրն էր այդ գարշելին և յոյժ վտանգաւոր, որովհետև հոգեբանութիւնը միջոց ընարած էր իր քրտմաների ձեռնարկութեան մէջ: Անգամ մը, որ իր որսին հոտը կաններ, ալ անիկայ կորուած էր. շատ հեռուէն արդէն կը նետեր իր թակարդին անտաների պարանները: Ասկէր խօսակցութիւն մը, անվերջ, ուր իր խօսակցին սիրտը կը ջանար գրաւել նախ, ջանալով շահագրգռել այն ամեն շնչին բաներով որ անոր սիրելի ըլլալ կը թուէր: Խեղճ մարդուն սիրտը կը տաքնայ կամաց կամաց վատահոգի Արտաշէսին վրայ, մինչ լրտեսը իր ճարտար հարցումներով հեռուն կը տանի անփորձ մարդը, դէպի անոր գործերը, դէպի հայրենիքը և վերջապէս դէպի անոր սրտին խորքերը, անոր հոգուն թագստոցը սպրտելու համար: Եւ պարզամիտ պանդուխտ հայաստանցիները խաբւելով գարշելի լրտեսի քաղցր, անոյժ լեզուէն, կը բացւէին, գաղանիքներ

կը հաղորդէին, յայտնութիւններ կանէին և հետեւալ օրը կամ քանի մը օր յետոյ կերթային բանտերու, մութ ու խոնաւ բանտերու մէջ քաւելու իրենց մեղքերը, առանց հասկանալու թէ իրենց մատնողը, ձերբակալել տուող իրենց բարեկամ Արտաշէսն էր: Եւ թէ պզտիկ կասկած մըն ալ ունէին, այն էլ կը փարատեր դժոխքի ծնունդ Արտաշէսը իր բանտային սյցելութիւններով, կեղծ մխիթարութիւններով, սուտ կարեկցութիւններով:

Լրտես Արտաշէսն երբեմն կատաղի յեղափոխական մը կը դառնար իրեն որսերուն առջև. պոլսեցիներուն յատուկ պոռոտախօսութեամբ և կեղծ ոգևորութեամբ շանթեր կարձակէր թուրք բռնակալութեան դէմ, անոր գարշուութիւնները կը ներկայացնէր պերճախօս կերպով, ինքզինքն ալ յաճախ զո՛ճ մը ներկայացնելով այդ հարստահարութիւններուն, կոկորդիլոսի արցունքներ կը թափէր իր թշաւա եղբայրներուն վրան, և երկնքի օդնութիւնը սպառած համարելով, յեղափոխութեան վերայ մատնանիշ կընէր, իբրև միջոցի մը, որ ամենուն ալ ազատութիւն պիտի պարգևէր:

Ինչպէս չհաւատար խեղճ մարդը, երբ այդ համոզած տանջած կեղծող գարշելին գրպանէն յեղափոխական թերթ մը հանէր և կուտար իր խօսակցին, պաղատելով, որ ան ալ ուրիշներուն տար, որպէսզի սուրբ գործը արագ յառաջ դիմէ: Քանի մը օրէն ետքը բանտերը նորէն կը լեցուէին բազմաթիւ զոհերով, որոնց բոլոր յանցանքը միամտութիւնն էր եղած:

Մասնագէտ լրտեսի այդ յատկութիւններն ու անոնց ճարտար կիրառութիւնները չէին կարող վրսակել ոստիկանութեան նախարարի օգնական արիւնկզակ Հիւսնի պէյէն: Արտաշէսը շատ շուտով սկսաւ գնահատուիլ և այնպիսի դիրք մը գրաւել գաղտնի ոստիկանութեան ներապետութեան մէջ, որ շատ ու շատ թուրքերու ալ նախանձը սկսաւ շարժիլ:

Լրտես Արտաշէսի շահատակութիւններ վերջապէս աչքի զարկին, երբ մանաւանդ զոհերն սկսան օրէ օր աւելի բազմանալ. բան մը, որ նպաստեց վերջապէս այդ պժգալի գործին հեղինակը որոնելու և գտնելու:

Լրտեսի այդ ստոր գործունէութիւնը մանրամասնօրէն տեղեկագրւեցաւ ու ներկայացուեցաւ «Հ. Յ. Պաշնակցութեան» Պօլսոյ Աեղբոնական Աօմիտէին, որ և իր մարտ ամուռ նիստերէն մէկուն մէջ՝

Ի նկատի ունենալով, թէ լրտես Արտաշէսը գաղտնի ոստիկանութեան մէջ յայտնի, յարգւած, ճարպիկ և վատահոգի լրտես մըն է, որու ի պաշտօնէ լրտեսութիւնը անվիճելի կերպով կը հաստատուի բազմաթիւ փաստերով և իրողութիւններով, առանց տարակոյսի հետք մը թողնելու:

Ի նկատի առնելով, որ լրտես Արտաշէսի ձեռքով բազմաթիւ ձերբակալութիւններ, խուղարկութիւններ, բանտարկութիւններ, մասնութիւններ տեղի ունեցան, մանաւանդ սկսեալ այս տարւայ յունւար ամսէն, որոնց միակ յանցաւոր ըլլալը վկանելով կը հաստատուի:

Ի նկատի ունենալով, որ կեղծ յեղափոխական ձեռնալով, բազմաթիւ միամիտներ խաբած և դաւած է,

նոյն իսկ յեղափոխական թերթեր տալով և խուզարկութեանց ժամանակ բոլորովին անմեղ մարդոց բնակարանները յեղափոխական թերթեր ձգած և անմեղ մարդոց բանտարկութեան, դատապարտութեան և քրտորման հեղինակ ըլլալը ու յանցաւորութիւնն կը հաստատուի բազմաթիւ փաստերով և վկայութիւններով:

Ի նկատի ունենալով, որ լրտես, մատնիչ Արտաշէսը շնորհիւ իր ընդունակութեան, ճարպիկութեան, զարգացման և սրամտութեան (յատկութիւններ, որոնցմէ կատարելապէս զուրկ են թուրք լրտեսները), վերջերս կատարեալ պատուհաս մը եղած էր հայ հասարակութեան համար,

Արտես Արտաշէսը մահուան դատապարտեց

Եւ այդ վճռի գործադրութիւնը յանձնեց իր իրաւասութեան ներքեւ գտնուող խմբերէն Թ-ի ասպետիկներուն:

Լրտես Արտաշէսի մահուան վճիռը ասպետիկները ամենայն յարողութեամբ կատարեցին Ապրիլի 3-ին, երկուշաբթի երեկոյեան ժամ 7-ին Ղալաթիա փողոցի մը մէջ:

Մինչդեռ լրտես Արտաշէսը մահաւորած, դաշոյնի վէրքերէն մահուան տապալակ մէջ գետնին կը տապալակէր, ոստիկանութիւնը փութաց օգնութեան և մեր սիրելին հիւանդանոց փոխադրեց, ուր և քանի մը ժամ ետքը իր սեւ հոգին Սուլթան Համիդին աւանդեց:

Իր աւանդական սովորութեան համեմատ ոստիկանութիւնը բազմաթիւ մարդիկ ձերբակալեց, իբր ոճրի հեղինակ, ի միջի այլոց նորէն ձերբակալեց այն 8-10 անձերը, որոնց ամիս մը առաջ բանտարկել տւած էր լրտես Արտաշէսը, բայց 15 օր բանտարկութիւնէն ետքը անպարտ արձակած էին: Չնայելով բազմաթիւ ձերբակալութիւններուն, ոչ մէկուն վրայ կրցան ապացոյցի նշան մը գտնել:

Մահուան վճիռը գործադրող ասպետիկները շնորհիւ վեհափառ սուլթանի, ազատ կը շրջին քաղաքի մէջ:

~*~

ՆՍՄԱԿ ՄՈՒՇԻՑ

Սաանոյ դէպքը առիթ է տւել շատերին. քանի քանի անգամներ երկար յօդուածներով հասարակութեան ուշադրութիւնը հրահրել այդ սարի սէգ որդւոց խղճալի կացութեան վրայ. և ըստ երեւոյթին մի առ ժամանակ հասարակութիւնը, նամանաւանդ հարուստ դասակարգը, իրան ցոյց էր տալիս հետաքրքրուած այդ հարցով սակայն սրդեօք կարելի է ասել, թէ այդ ոգևորութիւնը մի իրական հետեանք ունեցաւ, ոչ. անցան օրեր, անցան ամիսներ և իրանց հետ տարին այդ ոգևորութիւններ: Այժմ ինչպէս երևում է, ոչ ոք է մտածում, թէ արդեօք այդ խեղճ ժողովուրդ ինչով է կերակրում, միթէ այնքան էլ չենք կարող մտածել, թէ հրաշուց դարը անցած է, և չի կարելի այժմ հաւատք ունենալ

երկնից տեղացած կամ տեղալիք մանանային վրայ:

Ինչպէս լրագրներում հրատարակեցաւ մի քանի ամիսներ առաջ, թէ բարեգութ սուլթանը 50000 ղուրուշ նպաստ բաշխել խոստացած է հրկիզեալ սասունցիներին, և գուցէ ունենք այն աստիճան միամիտներ, որք հաւատացած լինեն այդ տեսակ խոստումներին և այն էլ մի այնպիսի անձնաւորութիւնից, որը հեղինակ է հանդիսանում բոլոր այդ թշուառութեանց, նպատակ ունենալով բնաջինջ անել մի այնպիսի քաջ ժողովուրդ, որոյ ինքնապաշտպանութեան գիտակցութիւնը սարսափեցնում էր նրան այս վերջին տարիներում:

Եւ որպէս զի կարողանամ փաստով ապացուցանել նրա այդ աւերիչ ծրագիր, աւելորդ չէր լինիր պատմել հետեւեալ դէպքը:

Ձէքի փաշան ամենաողորմած սուլթանի հրամանով ընդհանուր կոտորածի գործողութիւնը ամենայն հաւատարմութեամբ խղճի մտօք կատարելուց յետոյ, կոչում է արած այդ կոտորածից ազատ մնացած մի փոքր մասին, որպէս զի իրանց տեղեր վերագտնան, խոստանալով նրանց յանուն բարեգութ սուլթանի, թէ իրանց տուներ պիտի շինին հաց ու գրամական նպաստներ պիտի բաշխեն: Թուսահատ ժողովուրդ հալած իւղի տեղ ընդունելով հրամանատարի յայտարարութիւն՝ ամեն կողմից մեծ մասամբ հաւաքում են իրանց տեղեր և երկար ժամանակ միայն յոյսով են ապրում բաց օդի մէջ կերակրելով արտերում քրդերի ձիերից աւելցած ցորենի և կորեկի հասկերով:

Անցնում են օրեր, ամիսներ, վերջապէս Մուշ է հասնում սուլթանի իբր քննիչ ուղարկած Աբդուլլահ փաշան. ժողովուրդը ճարահատեալ դիմում է փաշային խնդրագրով յիշեցնելով նրան Ձէքի փաշայի միջոցաւ սուլթանին իրանց նպաստ խոստացած լինելը, սա բացարձակ մերժում է նրանց խնդիրը: Մինչև այն ատեն արդէն սկսած լինելով ձիւն տեղալ և ժողովուրդը տեսնելով, որ յուսախաբւած է, մերկ ու բոբիկ, լաց ու կոծով սկսած է դիմել դէպի Մուշ և հետզհետէ քաղաքում հաւաքում է մեծ բազմութեամբ, այդ բազմութեան միջից մի կին՝ մերկութեան մէջ ցրտից իւր կրած անտանելի տառապանքներից յուսահատուած, յանկարծ իւր գրկի երեխան ձգում է քաղաքի միջից անցած գետակի մէջ և ասում. «Անգութ հայեր, ահա այս էլ թող գնայ, ինձ չէ հարկաւոր, քանի որ դուք այդպէս անտարբեր էք վերաբերում դէպի ձեր թշուառացած ազգակիցները»: բարեբաղդաբար այնտեղ եղողներ ազատում են երախային վտանգից:

Այն գիշատից կառավարութիւնը, որ ամեն տեսակ շարագործութիւն և աւերում սառնասրտութեամբ գործեց, կոտորելով ամեն սեռի և հասակի անմեղներ, չկարողացաւ այլ ևս անտարբերութեամբ հանդիսատես լինել այդ սոսկալի վայնասունին, նրա համար միայն, որ իւր հանգստութիւնն էր խանգարում, որոշեցաւ բաժանել այդ թշուառներին Մշոյ դաշտի գիւղերին վրայ, որոնց տնտեսական վիճակն էլ ոչ աւելի միսթարական է քան սասունցիներինը, միայն առաջիններու առաւելութիւնը նրանումն է կայանում, որ ունին տուներ և ձր-

մեռալ պաշարի համար միմիայն կորեկ կամ կլիլ հաց. գարունը աւելի խոտով են ապրում քան թէ հացով:

Յարգելի ընթերցող, ահաւասիկ Սասնոյ ժողովուրդը ապրում է մի այնպիսի երկրում, որը առանց դրան էլ օրնութեան է կարօտ, բաւական չէ որ քրդի աւարա- ութիւնից աւելացածն էլ կառավարութիւնը սուրբի փոխարէն տարած է և յանուն օրինաց կողոպտած ու մերկացրած է խեղճերին և ահա մի բեր էլ է ծան- րացնում նրանց վրայ. այստեղ մեր ասածներ ապա- ցուցանելու համար երկար փաստեր առաջ բերելով, գլուխ ցաւցնելու կարիք չկայ, միայն բաւական է գի- տենալ, որ վեց ամսից աւելի է կառավարութիւնը սուրբ չի հաւաքում Յշոյ դաշտի բնակչաց մեծ մասից, հենց նրա համար, որ ինչպէս առածը ասած է, քառասուն աւազակներ մի մերկին չեն կարողացել կողոպտել, մինչ- դեռ ուրիշ շատ տեղեր ամենայն խստութեամբ հաւա- քում են հարկերն:

Այժմ Սասնոյ աւերակ գիւղերում բնակում են բնակ- չաց մի ամենափոքր մասը, միայն նրանք, որոնք աշնան կարողացել են մէկ մէկ փոքր հիւղակ շինել և մի քիչ էլ կորեկ դէսից դէնից հաւաքել, որոնց (ամեն մի ընտա- նիքի) մի մասն էլ դաշտում են ապրում իրանց ունե- ցած հաց չբաւականանալու պատճառաւ:

Քննիչ Յանձնաժողով դադարեցրած է իւր քննու- թիւններ մարտ ամսոյ սկզբին, և այդ վերադարձում է հետևեալ հանգամանքին:

Յանձնաժողովը Մուշ գալիս, ճանապարհում պատա- հած ամեն դիւզերից մեծ քանակութեամբ բողբոջները ներկայացրած են և այդ այնպիսի մի հոսանքով է շա- րունակւած, որ ոչ թէ դուհիի ժողովուրդը միայն, այլ Քննիչ Յանձնաժողովի նախագահ Շեֆիզ փաշային զայ- րացումն էլ կատարութեան աստիճանի է հասած և քննութեան ժամանակ վրդովւելով մի սասունցի կնոջ տւած արդար քննութիւնից, ոտքի կանգնած և մի լաւ ծեծած է խեղճ կնոջ, ի ներկայութեան եւրոպացի քըն- նչաց:

Քաղաքում մի քանի մոլեռանդ զօրապետներու և աչքերիկ մօլլաներու միջոցաւ թուրք հասարակութեան մէջ գրգռումներ են առաջ եկած, որ եթէ մի քիչ էլ սաստիկանար, հասկանալի է, թէ հետևանքը ուր կը հասնէր:

Քննիչ յանձնաժողովոյ գործունէութիւնը խիստ սահ- մանափակ է եղած, որովհետև չէ կարողացած անկախ գործել:

Երևակայեցէք, եթէ մի դատարանի մուտք արգել- ւած լինի ոստիկաններով, ինչ դործունէութիւն կա- րող է ունենալ այդ դադարան. այնտեղ կարող էին մտնել միայն այն տեսակ մարդիկ, որոնք ոչ բանսից էին վախում և ոչ մահից, այլ բացարձակ զինուորնե- րու հետ կուեելով էին ներս մտնում, մինչև իսկ շատ անգամ փողոցի կուոյ ձայնը հասնելով ժողովի ական- ջին լուսամուտից, պահանջում էին, որ բաց թողնեն բողբոջներին. ներս մտնողներից, որոնք որ քիչ թէ շատ ճարպիկութիւն ունէին, փախուստ էին ապիս ոստիկա-

նաց ճանկերից, իսկ նրանք, որ չէին յաջողիլ փախել, արժանանում էին իշոյ դրախտին:

Ն Ա Մ Ա Կ Կ Ա Ր Ի Ն Ի Ց

Հակառակ այն խիստ ուշադրութեան, որ Եւրոպան ներկայիս դարձուցած է դէպի Հայոց հարց, սուլթանի կառավարութիւնը և ժողովուրդը դարձեալ կը շարու- նակեն իրենց հարստահարութիւնները: Ամեն օր մի քան զմիւսն աւելի սոսկալի դէպքեր, թէ կառավարու- թեան և թէ ժողովրդի կողմէ, կուգան աւելցնել խեղճ հային տանջանքը և նորանոր վերքեր բանալ անոր արգէն վիրաւոր սրտին վրայ: Հետևեալ սոսկալի եղե- լութիւնք խիստ պերճաբան են ապացուցանելու վերև ըսածներս:

Քաղաքէս դէպի հիւսիս-արևելք, գրեթէ 5 ժամու հեռաւորութեամբ գտնւած „Թավթա“ և „Ղարակե- օխէկ“ գիւղերուն մօտ շինւած ամրոցներուն զօրապետ- ներն և զօրքերը այս օրերս սկսած են իջնել ճանապար- հի վրայ և չարչարել ու կողոպտել հայ ճամբորդները: Գեռ անցեալ օրը սաստիկ կերպով ծեծեր և կողոպ- տեր էին Զիթող գիւղի բնակիչներէն երկու երիտա- սարդներ:

Այդ գիւղի միւտիրը, որ թուրք է, տեղոյն թուրքե- րէն խելիլ բէկին քայքայւած սենեակը հայերուն ծախ- քով նորոգել տալու դիտումով, կը պատրուակէ, թէ ինքը պիտի բնակի այն տեղ և իբրև թէ ըստ օրինի այդ գիւղացիներուն պարտքն է հողալ իրենց միւտի- րին յատկացրած շէնքին կառուցման ծախքը. միմիայն գիւղի հայերէն կը գանձէ 12 ոսկի և այդ դրամով սենեակը նորոգելիք վերջ, կը յանձնի գարձեալ խելիլ բէկին, իսկ միւտիրը կը մնայ իրեն առաջւան տեղը: Մեծ ճարպիկութիւն, որ իրաւամբ խիստ պատուաբեր է կառա- վարական պաշտօնէի մը:

Այդ խելիլ բէկը (Ճաճկաստանի մէջ բէկ և էֆէն- տի պատւանդանները շատ աժան են, ամենէն ստոր թուր- քը բէկ ու էֆէնտի է), որ հօրմէն ժառանգած էր բա- ւական մեծ հարստութիւն, զեղխութեան և ցոփութեան մէջ ամբողջ ինչքը վատնելէ զինի, այժմ սկսած է բըն- նութեամբ և զանազան զրպարտութիւններով իրեն հայ դրացիներէն դրամ կորզեր: Այս տարի մի քանի ա- մուայ մէջ հայերէն յափշտակեր է 30 ոսկի, 40 կոտ ցորեն: Անցեալ օրը Չախալեան Ստեփանը բէկին առ- ջեկն անցած ատենը բարև չբռնելու ծանր յանցանքը դործած էր, ուստի չարաչար կը ծեծուի և 38 դրժ վճարելու տուգանքին կենթարկուի:

Իսկ մՏ. Յովսէփը անլուր զըպարտութեան մը զոՏ կերթայ, և 10 օր բանտարկելէ և 7 ոսկի, իբր տու- գանք չգործած, նոյն իսկ չբրագործած յանցանքին, մի- տիրին տալէ վերջ հազիւ հազ կազաուի: Այդ պատ- ճառաւ խեղճ անձը ստիպեցաւ, իրեն ընտանիքը յետին ծայր թշուառութեան մէջ ձգելով, պանդխտութեան դիմել:

Այդ գազանաբարոյ անձնաւորութիւնը իր հրամանին տակ եղող ոստիկան զինւորներն կը ցրւե հայոց տուներուն մէջ: Այ կարողէք երեւակայել, թէ այդպիսի պարագաներու մէջ ինչ անլուր չարիքներ կրնան առաջ գալ: Անոնցմէ Ղարա-Ռէտէ անուն զօրքը 20 օր Բթօեան Գէորգին տունը մնալով, ձրի ուտել-խմելէն վերջ, 30 շրուշով դիշ-քիրէսի առնելով կը մեկնի:

Գոլ-Աղասի Իպրահիմ էֆ. 370 զօրքով կերթայ 2իթող գիւղը և 5 օր մնալով 600 հոսա հաց, 20 հոսա իւղ և 100 հոսա պղուր, իբր ուտեստ իրեն զօրքերուն, հայերէն ձրի առնելէն զատ, ի փոխարինութիւն իրեն ցոյց տրւած այս հաւատարմական զգացումին, հայ տուններուն պղնձեղէնները կողոպտել կուտայ զինւորներուն:

Յաճկաստանի մէջ ինչ որ հային կը պատկանի, ինչ որ հայ անունը կը կրէ, ենթակայ է բարբարոս հարստահարութեանց և նախատինքին: Յոհաննէս քահանայն զանգահարութեան պատճառաւ խիստ կը ծեծւի Մամոյ Մամոն թիւրքերէն, որոնք մինչև իսկ կը նկրտին եկեղեցի մտնել և անլուր հայհոյութիւններ տեղալ աղօթոյներուն վրայ, առարկելով, թէ Բամազանին մէջ զանգահարութիւն չպիտի ըլլայ:

Թալթայի սմրոցին հարիւրապետը, Ահմէտ էֆէնդին, ճանապարհին ձիէն իջնելով կը հեծնի Բալախեան Երեմի մը վրայ, ըսելով, թէ ամեն օր դուք, ձիթողիներդ թուանձցիներուն ձիերն էք, այսօր ալ դու ինձ ձի եղիր, որովհետև ձիս յոգնած է: Յիրաւի ի լրումն ամենայն չարեաց, այս գիւղի հայերը քաղաք գնալներուն ստիպւած են ձիու տեղ ծառայել Թուանձ գիւղի անգութ թուրքերուն, որոնք այս չափով չբաւականալով կը ծեծեն և կը կողոպտեն իսկ:

Այս ամեն տանջանքներուն վրայ եթէ աւելացնենք թուրք հարկահաւաքներուն տւած չարչարանքները, այն ատեն կրնանք որոշ գաղափար մը տալ տառապանքի մը վրայ, որուն տոկալու համար մեր բազմաչարչար նահատակներէն ամենէն համբերատարն ալ անզօր գտնուելով պիտի դատապարտուէր:

2իթող գիւղի 100 տուն հայերուն տարեկան հարկն է 100,000 շոշ էմլաքի և արաչիի տուրք. 10,000 շոշ խոտի և առւոյտի տասանորդ և 3000 քիլէ ցորեն: Ասոնց գանձումին ժամանակ զօրքերը չլուծած անգրթութիւններ կը գործեն: Օրերով կը մնան իրենց ձիերով հայերուն տունները, կուտեն, կը խմեն և վերջն ալ անոնց թէ լծքարը և թէ կաթնատու անասունները կը գրաւեն ի հաշիւ տուրքի:

Նմանօրինակ անգրթութիւններ կը գործուին նաև ամեն հայ գիւղերու մէջ: Եթէ ուզենք ամենն ալ ի գիր առնել, բարբարոսութիւններու և հարստահարութիւններու անհատնում շարք մը պիտի պարզու մեր դէմ: Ուստի կը բաւականանամ անոցմէ միայն 2իփօթ գիւղի զարհուրելի դէպքը գրելով:

Սպեր գաւառակի հայաբնակ 2իփօթ գիւղը 1894 զ. ամսոյ մէջ խիստ աղետարն տեսարանի մը թատերալսյրն եղաւ: Ըրջակայ գիւղերու թուրքերը կը յարձակին այդ գիւղի վրայ և 16 մարդ ծանրապէս վիրաւորելէ, 4 մարդ

սպանելէ և տուները կողոպտելէ զինի, ամենայն անխղճութեամբ մի քանի պարկեշտ կիներու պատիւներն իսկ կը բռնաբարեն: Այս սոսկալի անգրթութեանց համար խեղճ, կողոպտած և նիւթապէս ու բարոյապէս վիրաւորած հայերը կը բողոքեն ուր որ անկէ, սակայն ամենայն անխղճութեամբ և լրբութեամբ կը պատասխանի իրենց՝ «Ձեզի համար դեռ այդ քիչ է, աւելին պէտք էր որ ընէին»:

Գանք քաղաքիս մէջ պատահածներուն. հոս թէ կեանքի և թէ ինչքի կատարեալ անապահովութիւն կը տիրէ. անխնայութիւնը իրեն վերին աստիճանին հասած է: Ամեն օր նորանոր ցաւալի դէպքերու ակախատես լինելու դժբխատութիւնը կունենանք, դէպքեր, որոնք ամենն ալ ի մի նպատակ կը յանդին, այն է կողոպտել, տանջել և սպանել հայը, և որոնց հեղինակներն են հաւասարապէս թէ կառավարական պաշտօնեաները, թէ զօրքերը և թէ կառավարութիւնէն դրողւած տգէտ ժողովուրդը:

Այդ մարդիկ կը մտնեն հայերուն խանութները կամ վաճառատունները, կուզեն քանի ապառիկ գնումներ ընել խալառ չը վճարելու դիտումով և երբ չեն յաջողիր, կը սկսին սոսկալի հայհոյութիւններ տեղալ զանազան սպառնալիքներով:

Անցեալ օր բանտարկւած քերդ քեկերէն մէկը, որ զօրքի մը հսկողութեան տակ կը շրջէր շուկաները, վանեցի Արշակ Մանգալունեանին ձիուն տէր կըլլայ, ըսելով, թէ 5-6 ամիս առաջ երբ Ալայ-բէկը եկաւ մեզ ձերբակալելու, անոր զօրքերը յափշտակեցին այս ձիս, զոր այժմ այս հային մօտ կը տեսնեմ: Դատարան կը գիմեն, հայը նոյն իսկ թուրք վկաներով կը հաստատէ այդ ձիուն երկու տարիէ ի վեր իրեն քով լինելը և որմէ գնելը: Բայց արդարութեան պաշտօնեան այս բացարձակ ճշմարտութեան առջև տակաւին չուզէր իր վճիռը յօգուտ հային տալ և առանց որոշ պատասխան մը տալու, դատը ուրիշ օրւան մը կը թողու, անշուշտ երկուստեք կաշառք առնելու և վերջ ի վերջոյ հայը անիրաւ հանելու նպատակաւ:

Կառավարութիւնը իրեն ընդարձակ պէտքերուն և վճարումներուն հանդէպ, խիստ անձուկ սնտուկ մը ունի: Այս պատճառաւ խիստ հրաման հանած է հարկահաւաքներուն ամբողջովին գանձել նոր սկսող տարւան (1895 մարտ 1) կալւածական և թէ ուրիշ տուրքերը: Կառավարութեան այս հրամանը գողին ծոցը քար դրնել է, ուստի հարկահաւաքներն ալ ամենայն ազատութեամբ սկսած են խիստ անխղճութեամբ վարել դէպի հայ ժողովուրդը. գիւղերու մէջ ամեն տեսակ չարիք գործելէ վերջ խեղճ գիւղացիները կը ստիպեն ծախել իրենց անասունները, սերմերը և վճարել տուրքը: Իսկ քաղաքիս մէջ խժոժաբար կը ծեծեն և կը բանտարկեն այն հայերն, որոնք չեն կրնար իրենց ամբողջ տուրքերը մէկ անգամէն վճարել: Անցեալ օր դեղագործ Լաւենիին դեղատանին առջև հարկահաւաք զօրքերը, հաւատօրէնք հայհոյելով հանդերձ, չարաչար կը գանակոծեն մի քանի հայեր: Այդ տեղ կը գտնուին մէկ քանի կառավարական բարձր պաշտօնեաներ ալ, ասոնք

փոխանակ զգուշացնելու կը խնդան և կը քաջալերեն հարկահաւաքները իրենց անգթութեան և անիրաւութեան մէջ:

Ն Ա Մ Ա Կ Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն Ի Ց

II

Բամազան ամսոյ առաջին օրերու մէջ գիշերուայ ժամը 2-ին 20-30 հոգիէ բաղկացեալ թուրք սրիկաներու խումբ մը քաղքին հաճի Գասըմ կանցնի, ափեղ ցփեղ երգեր պոռալով և ուկիւլլէրի հարւածներ տալով: Հայ տներու մօտ ուկիւլլէրի հարւածներ կը կըրկնապատկեն և մի հայ տան դուռին փանփուշտներ կարծակեն, ըսելով «Կախ եթէ երևին դուրս, ի՞նչ լաւ կըլլար, այս իրիկուն մէկ գեափուրմ՝ ալ չհանգիպեցանք, որ շան սատակ ընէինք»: Տան մէջ նոյն ատեն էրիկ մարդ չկար և կանայք վախերնուն կը պըլին: Սուլթանի սիրասուն զաւակները իրենց թափօրը կը շարունակեն քեռքը կոչւած տեղի սրճարանը ու հոն ամբողջ 3-4 ժամ կը պոռչտան, միշտ հրացան, ուկիւլլէր պարպելով և շատ ուշ ատեն կը ցրին: Սրճարանին մօտ միշտ պօլիս կը կենայ, թաղերը գիշերային պահապանները «հաչալուրը» կը հսկեն թէև, բայց դէպքէն յետոյ մէկ երկու օր կանցնի, կառավարութենէ ձեռնարկ մը չըլլար, հարւածող դրան տանտէրը կառավարութեան կը բողբոջէ, մէկ երկու անձ ալ մասնանիշ ընելով, բայց որո՞ւ հոգ, ո՞վ է նայող, ո՞վ է քննող՝ չէ՞ մի որ յանցաւորները հայ չեն:

Այս ամսու մէջ թուրքեր Այվասիլ թաղի մէջ հայ տան մը ապակիները կը խորտակին:

Ուստի շատ ալ զարմանալի չէ, որ թուրք խաւարամիտ ամբոխը քաջալերելով կառավարութեան ընթացքէն, սկսած է բոլորովին սպառնական դիրք բռնել դրացի հայ ժողովուրդին դէմ, ինչպէս հոս, նոյնպէս Բաբերգ, Երզնկայ և ուրիշ հայաբնակ քաղաքներու մէջ կոտորածի պատրաստութիւն տեսեր է և յետոյ աճը գուեր է կառավարութեան միջամտելով:

2-3 օր առաջ կուսակալ Գատրի պէյը՝ մէկ երկու հայ աղաներ կանչելով, ցաւ յայտներ է, ... որ Տրապիզոնի մէջ կոտորած ընելու խօսքը հայերը դիտամբ յերիւրեր են, ամօթ չէ՞ հայերուն: Ի՞նչ կապիկ կառավարութիւն, ի՞նչ պարկեշտ վալի, խեղճին սիրտը կը ցաւընեն եղեր...

Մարտի 15-ին թրքական «Սէօյիւտի» շոգենաւով երկու բանտարկեալ քահանաներ՝ Տ. Թաթուլ Կարմիրեան և Տ. Միքայէլ Թահմազեան Պօլիս զրկեցան կառավարութեան կողմէ:

Ատովմ Ասլանեանը Պօլսէն «Պատուում» Գալէսի ըսւած քրտորավայրը զրկելու խօսք կայ:

Մարտի 15-ին տեղիս նախաքննիչ դատարանը, բանտարկեալներու ամբաստանութեան թղթերը քննելով, բոլորովին անպարտ հռչակեց Գալիթ Գարաարթինեան

և Գալուստ Չաքըրեան, որք 8 ամիսներէ ի վեր բանտին մէջ կը հեծէին:

Գալիթ Գարաարթինեանի 85 տարեկան ծերունիին ձերբակալումը այսպէս կատարուեր է:

Նախապէս Չաքըրեանի գայմագամ-աւազակ Սուսա փաշան կարևոր գումար մը պահանջած ըլլալով չի վճարեր: 1993 թ. յուլիս ամսոյ վերջերը օր մը յանկարծ 3-5 զապթիէ կը ձերբակալեն Գալիթը և Բազար կոչւած տեղը լրտես-գործակալ Ավճի օղլի Հասանի տան մէջ կը բանտարկեն և կսկսին հարցաքննութեան՝ թէ դու փախտական կը պահես, զէնք կը ցրես, թօրիտօ ունիս ևն: Ահաբեկ ծերունին ինքզինքը ժողովելով, ապացոյց կը պահանջէ և ամբաստանութեանց սուտ ըլլալը կը փաստէ: Նոյն միջոցին զապթիէները կը յարձակին ծերուկի վրայ, լաւ մը կը ծեծեն և հաստ չւանով իւր ձեռքերը կը պրկեն, վրան ջուր կը թափեն, որ չւանը աւելի սեղմէ ձեռքը: Միւս կողմանէ ունեղի մը և երկաթի կտորներ կրակի պէտք ցնցելով, կսկսին հարցաքննել՝ ոչուտ ըսէ տեսնեմ, թէ այս ինչ բաներ դու չըր մի և եթէ դու մէջը չես, այս ինչները այս գործին մէջ չե՞ն մի: Կորովամիտ ծերունին կընդդիմանայ սուտ խօսելու: Այն ատեն կսկսին տաքցած երկաթներով անոր ոտքերն ու ձեռքերը դաղել: Ծերունին ուշաթափ կը փուռի դետին: Աւազակ զապթիէները ամենէն առաջ վրան եղած չեղածը արմենը կը կողրպտին, անկէ վերջը զայն կը նետեն սենիկին մէկ անկիւնը և կսկսին մերթ ընդ մերթ վրան խնջել, թքնել, վառած սիկարա դնել մանմին վրայ և լրբութեան չափը ալ անցունելով իրար ետեւէ սուլթանի զապթիէները խեղճ ծերունիին քթին բերնին կը միջեն, մինչև որ ծերունին կուշաբերի և Ասուած պոռալով, ոտքի հարւածներով մօտը գտնող զապթիէն կը դուրէ կրակարանին վրայ նորէն կսկսի ծեծը... Ծերունիին տղաքը ձար ձուր կընեն, 10 ոսկի կուտան Ավճի օղլու Հասանին և Սողումն Փափագեազնին և քանի մ'օր վերջը ծերունին տանջարանէն ելնելով տուն կերթայ: Իր ազատումէն 4 օր յետոյ նորէն կը ձերբակալեն զինքը և թէ Չաքըրեան և թէ Սամսոն զինքը 5-6 ամիս չարչարելէ յետոյ «վեհափ» սուլթանին ծննդեան տարեդարձին օրը կը փոխադրեն Տրապիզոն և ամիս ու կէս վերջը... բանտէն կազատուին ինչ կարգ ու սարգ:

Գալուստ Չաքըրեան Չաքըրեանի Աղաճ գիւղէն է, իրմէ 8 մէծիտ պահանջեր են. ինք մէկ ոսկի 2 մէծիտ տւած է. մնացեալը չվճարելուն համար յեղափոխական կամբաստանուի և երկար ամիսներ բանտը մնալէ յետոյ ազատ կարձակուի:

Պօլսէն հեռագիր եկած է կուսակալութեան՝ բանտարկեալներու էվրաքները շուտով նայելու:

ԱՐՄՏԱՆԻ ԽՆԴՐՈՅՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

(ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՅԻՑ)

III

Ամբաստանագիրը կարգացելէն վերջ վկաները հարցանել սկսան: Վկաները մ'հ. Գալուստը միտոր Գէորգին վրայ հրազէն պարպելը, Բէֆահէյէի գայմագամին մ: Գալուստի կողմէ կողպուելու ամբաստանութիւնները ժխտեցին. բացի երկու ոստիկան-զինւորներէ: Մ'հ. Գալուստի վանք երթալն ալ չհաստատուեցաւ, իսկ կոմիտէի համար վկայութիւն տուողները, հակառակ փաստաբաններու պահանջին, դատարան բերելու և ամբաստանելոց երեսին վկայելուն ընդդիմացաւ դատաւորը, ըսելով թէ՛ «եթէ ձեր երեսին բերեմ, վախերնուն չլիտի վկայեն, գիտնալով, որ ձեր դէմ վկայութիւն տուողը կոմիտէն կսպանէ»: Գալով Իօմէրի սպանութեան, վկաներն իրենց վկայութիւնը, ինչպէս քննութեան ժամանակ, նոյնը դատարանի առջև տւին, բայց այնպիսի հակասութիւններով, որ բացարձակ սուտ լինելը փկնյայտի կերէէր: Դատաւորը տեսնելով, որ վկայներէն ոմանք Իօմէրի սպանութիւնը կատարողը Սարգիսն է պիտի ըսեն և հետևաբար եղած մեքենայութիւնները պիտի ցնդեն, սպանացաւ ըսելով՝ «ձեզ ալ անոնց պէս պիտի բանտարկեմ» և ուզածին պէս վրկայել տաւ: Սոյն դատաւորութեան մէջ փաստաբանը դատաւորին ճնշմամբ և ստիպումով վկայ խօսեցնելը ապօրինի ըլլալը յայտարարելու համար, նախագահը կը պատասխանէ. «ես անանկ կընեմ, ինչ՞ կրնաս ընել, նա հրամանէ»: օրէնքը բացարձակապէս միայն իւր հրամանին և բերնին մէջ ըլլալը յայտնելով, ամեն կերպով օրինաց հակառակ կը վարուէր, շնորհիւ վեհ. սուլթանին:

Մ'հ. Գալուստի Տաւրոս Խոջ օղլի Աիմեր աղայի քով գնալը յանցանք համարելով, ըսին. «որովհետև դու տէրութեան թշնամի մէկ ասպատակին քով գնացած ես, անոր ոճիրներուն մասնակից կը նկատուիս: Տէրութեան հարիւրապետը և շատ մը զինւորներ ջարդող յելուզակին քով ինչ՞ գործ ունես, եթէ դու ալ անոր նման տէրութեան թշնամի մէկը չես. հարկաւ գնացիր իրար մէջ կապ հաստատելու, որ ձեր նպատակը միատեղ առաջ տանէք»: Մ'հ. Գալուստի կողմէ առարկուեցաւ թէ՛ «եթէ Խոջ օղլին ասպատակ ու յելուզակ մէկն է, ի՞նչու համար տէրութեան Մէճիտիյէի առաջին պատուանշանը կը կրէ կուրծքին վրայ»:

Ասոր դատական նախագահը ինչ պատասխանէ աղէկ. «Ի՞նչ ընեմ, որ քեզի պէս ասպատակը չգարկին և հոս բերին»:

Տօքթ. Վ. Փաշայեանը՝ իր պաշտպանողականը, տալով կը խնդրէ, որ Գուրուչայի քործ գրեւծ ծեծերն, հարստահարութիւններն, քննութեանց ժամանակ եղած ճշնշուածներն, առաջի քննութեանց հերքումը ի նկատի պիտի առնուին թէ՛ ոչ, որոշում մը տրուի:

Նախագահը այս առաջարկութեան առանց որոշում

մը տալու տօքթ. Փաշայեանի կրտսէ թէ՛ «Փաշայեան է-ֆէնտի, դու անոնց (բանտարկեալներուն) փոխանորդը չես, ինչպէս կօմիտէին կը նախագահէիր, կուզես հոս ալ նախագահել, եթէ այդ առարկութիւնը ընելով կը դժկամակիս պատասխան տալ, պիտի դարբեցնեմ դատաւորութիւնը, ճանչցիր քեզ ամբաստանեալ մ'ես, եթէ ուզեմ, կը կախեմ և եթէ ուզեմ, կարձակեմ»: Շատ իրաւունք ունի դատաւոր էֆէնտին, միթէ Թուրքիոյ մէջ ամեն գործ պաշտօնեայի քմահաճոյքէն կախեալ չէ՞, ամեն մարդկային արժանապատուութիւնն, սուրբ զգացումներ խաղալիք չեն եղած անարդ, փչացած պաշտօնեաներու գազանային կրքերուն և հետևաբար շատ ալ զարմանալու չէ Երզնկայի դատաւորին սպանալից յայտարարութեան վրայ, որ իրագործեց ալ:

Հակառակ օրինաց, այս դատաւարութեան եղանակին վրայ միշտ կուր մէջ էին դատաւորն ու փաստաբանները. ամեն անգամ, որ ապօրինի քննութեանց, ծեծերուն ու զեղծումներուն վրայ ամբաստանելոց կողմէ խօսք մը ուղղէր դատաւորին, միշտ հետևեալ պատասխանը կուտար՝ «արդէն յեղափոխականներուն մէկ սկզբունքն ու յատակագիծն ալ կառավարութեան հաւատարիմ պաշտօնեաներու դէմ ներս ու դուրս միշտ բողոքել է»: Թուրք կառավարութեան համար կեղեքիչը՝ հաւատարիմ, հարստահարիչն ու բռնակալը՝ անձնէր, մարդասպանը՝ անմեղ, արիւնընուշտ աւազակն՝ բարեբարոյ հպատակ կը համարէին, ուստի Թուրք բարձրագոյն կառավարութիւնը ամեն միջոց գործ կը դընէ իւր անձնէր գողակիցներուն գործածները դուրս չհանելու: Ահա այս պատճառով, երբ պաշտօնէից գազանութեանց դէմ բողոքողներ գտնուին, այնպէս կը Փըշայ և սպանալիքներ կընէ դատաւորը:

Ինչպէս քննութիւնները, նոյնպէս դատաւարութիւնը շնորհիւ արդարադատ սուլթանի արժանի կառավարութեան, ճնշման ու բռնութեան տակ տեղի ունեցաւ: Ախտին ու վերջնալը ամբողջ տարի մը տեւեց: Դատարանը երբէք նկատի առած չէ փաստերով լեցուն բողոքագիրները և մանաւանդ ճանապարհի «թեղքերէ»-ները (անցագրերը), որոնց տէրերը արևի պէս կը հաստատէին, թէ իրենք Վ. Պօլիս կը գտնուէին շատ ատենէ ի վեր և սուտ էր իրենց վրայ եղած ամբաստանութիւնը, թէ գործած ոճիրներու ժամանակ իրենք ներկայ լինելով, մասնակցութիւն ունեցեր են: Դատախազի օգնականն պահանջագիրը ներկայացնելով, ա մ ե ն ու ն մ է կ տ ե ղ մ ա հ ա ն դ ա տ ա պ ա ղ տ ա ի ը ը կ ը պ ա հ ա ն ջ է յ ա ն ու ն ս ու լ թ ա ն ի ն :

IV

Վ. Ղ ո ո յ ն ա ղ ա կ ու մ ը.— Յետ ութ օրւայ խորհրդակցութեան 1894 դեկտեմբերի 1-ին, հինգշաբաթ օր ոստիկան զինւորները կը հրամայեն բանտարկելոց դատարան երթալ, սակայն գաղտնի դիտումով մը կը յետաձգուի: Դեկտեմբերի 3-ին շաբաթ օր, հակառակ 50 անգամայ տեղի ունեցած գաղտնի դատա-

վարութեան հրապարակաւ վճիռ արձակելու համար կառավարութեան շէնքերն, սրահն, պաշտօնեաներով և թուրք ու հայ բազմաթիւ հետաքրքիրներով կը լցւի բանտարկեալները մէկիկ մէկիկ խուզարկելով, սրահ տարւեցան: Գատաւորը հրամայեց գրագրին կարգալ դատապարտութեան որոշումը. ի վերջոյ դատախազի օգնականն, վերստին իր պահանջմագիրը տալով՝ պահանջեց, որ ամենէն ծանր պատիժները տրւին: Փաստաբաններն ալ պատժի թեթեւացում խնդրելէ վերջ կը մտնեն խորհրդակցութեան սենեակը, իբր թէ պատժոյ չափը որոշելու:

Խորհրդակցութենէ վերջ դուրս գալով, նախագահը կսկսի կարգալ պատժոյ չափերը, 25 մարդ մահաւան դատապարտելով «տահա պունտան աղբը պուլուն մատը զընտան» (աւել ծանրը չգտնելուն) կըսէ ցաւելու եղանակաւ: Կառավարութեան պաշտօնեայք և թուրք տղէտ ամբոխը ոգևորւած կը ցրւին, կարծես թէ Ռուսիան ոչնչացուցած ըլլային:

Որոշումը տալէ վերջ բանտարկեալք բանտ կը տարւին: Պաշտօնական աղբուրներէ ստուգւած է, թէ բարձրէն սաստիկ հրաման եկած է հայ ամբաստանեալները ամենն ալ ամենածանր պատիժներու դատապարտեն՝ «Եօրինակ այլ աստամբականներու»: Ահա կառավարութիւն մը, որ արդարութեան վրայ իսկ կը բռնանայ խափանելու ճշմարտութիւնը:

Միւշեր Զէքի փաշա, Սասնոյ կոտորածի հերոսը, շքանշաններու արժանացող և հրէշ սուլթանի հաւատարիմ միւշիւրը, իր արեան անզուսպ ծարաւը չյազեցնելով տարաբաղ Սասունի հազարաւոր զոհերու անմեղ արիւնով, ամեն մին ջանք ի գործ դրաւ խեղճ բանտարկեալներուն քաշած տանջանքին փառաւոր վերջաւորութիւն մը տալու: Ահա արիւնարբու գազան մը, որ իր մեծի հրամանով յայտնի համարձակ կաւերէ ամբողջ գաւառներ, ցորենու հասկերու պէս կը հնձէ մարդկային գլուխներ և դեռ անպատժ չմնալէ զատ, շքանշան ալ կտանայ մեծաշառաչ հանդէսներով ու դեռ հաստատ փաստ կը փնտռեն մարդասէրները...

Զէքիի մէկ եղբայրը Գուրուչայի գայմագամ ըլլալով, այս ինդրոց, կեղեքմանց ու հարստահարութեանց բուն պատճառն եղած է. ինքը կը ցանէ, Զէքին կը հնձէ. մինչև այսօր Գուրուչայի գայմագամը անարգել ամեն տեսակ հարստահարութիւն ի գործ կը դնէ և Գուրուչայի բանտը հայերու բնակարան դարձնելու կը ճրգնի: Այս օրեր դարձեալ քաղաքական յանցանքով բանտարկած են 4-5 հայ. չգիտցւիր, թէ այս անգամ ալ այդ բանտարկողները պիտի կրնան կաշառով ազատուիլ թէ ոչ, որովհետև Գուրուչայի կառավարութեան գործնական ծրագիրն է ամենէն վերջը, երբ կատարելապէս սնանկացնէ բանտարկեալը, անպատճառ իբր քաղաքական յանցաւոր զրկել երզնկա:

Ե զ Ր ա կ ա ց ու թ իւ ն. Այլ և այլ զրպարտութիւններու ու մատնութեամբ Արմտանի խնդիր հետևեալ ամբաստանութեան տակ կազմւած է.—

1) Տօք. Փաշայեան Արմտան երթալով Երլէկեան եղեայի (մատնիչ) տունը, Արխանեան մհ. Գալուստի և

ուրիշ շատ մը անձերու հետ ժողովելով, կօմտէ կը կազմէ:

Այս ամբաստանութիւնը օրինաւորապէս ջնջելու համար դատարանին հինգ անցադիր կը ներկայցնի, որոնց տէրերը, ամբաստանած գումարման և տօք. Փաշայեանի Արմտաները այցելած ժամանակ իրենց Պօլիս գտնելը, հետևաբար ամբաստանութեան սուտ ըլլալը կը հաստատեն: Գատարանը, որ պարտաւոր էր՝ այդ պաշտօնական անցադիրը նկատի առնելով, մատնիչներու ստութիւնը երևան հանել, բոլորովին օրէնքը և արդարութիւնը ոտքի տակ առնելով, դատապարտեց ամենքն ալ: Ներկայ դատարանները անիրաւութեան հետ մէկտեղ այնչափ կոյր են, որ Արմտանի կօմտէին անձանց մեծագոյն մասը չլինալով գտնել, դատապարտածնուն մեծագոյն մասը իրականապէս անմեղ ու անգիտակներ են:

2) Իօմէրի սպանումը բացարձակապէս Նօխուտեան Սարգսի կողմէ մենակ և հրացանով գործւած ըլլալով հանդերձ, սուլթանի կառավարութեան հանրածանօթ անարդարութեան ու բարբարոս ընթացքով խնդիրը կօմտէի վրայ ձգւեցաւ և որ աւելին է, բժշկին տգիտութեամբը, զարնւած մարդը խեղդւած ու այրւած լաբոր եղած ըլլալուն համար, 18 հոգի, բացի մեռնողներէն, ընկերութեան կողմէ հրահանգեալ կանխամտածութեամբ Իօմէրի սպանիչը համարւեցան և դատապարտւեցան:

3) Բէֆահիյէի գայմագամը կողոպտողները ուրիշ հրոսկային խմբի պատկանելով հանդերձ, 2 ոստիկաններու սուտ երդումը Արխանեանի խմբին վրայ բեռցուց դատարանը. ահա սուլթանի կառավարութեան տղէտ ու անարդար ընթացքը:

4) Բունելի վերջ, Արխանեանի խումբը ծեծի ծնւան տակ հարցաքննիչը և խիստ կերպով չարչարուիլ բժշկին լաբորով հաստատուած ըլլալով մէկտեղ, ամբաստանիչ ատեանը անպարտ հանցեց ծեծող պաշտօնեաները:

5) Սուլթանի հաւատարիմ ու բարեկարգ ըսած ոստիկանները՝ կատարած գազանի պէս Արխանեանի տան վրայ յարձակելով, թալանած են, տանելով դրամ, հագուստ, զարդեղէն, ծխախոտ, շաքար և ինչ որ ձեռքներին անցած է: Ահա սուլթանին պատիւ բերող ոստիկաններ, որ հպատակ ժողովուրդը կը կողոպտին և շէն գիւղերը կը քանդեն:

6) Սարգսին Իօմէրը սպանելու խնդիրը հանրութեան վրայ ձգելով, հազարաւոր ոսկիներ կողոպտած ու շորթած են խեղճ ժողովուրդին և ամեն հանդիպողը յեղափոխական է ըսելով, բանտը նետելով և մի քանի ոսկի առնելէ յետոյ արձակածներն կամ դատապարտածներն անհաշիւ են:

Արմտանի խնդրով ձերբակալւածներէն մեռնողներն են. Մհ. Ճանիկ Ալիքսանեան, Մկրտիչ Շահիկեան, Գեորգ Ճանիկեան, Կարապետ Յովհաննէսեան, Պօղոս Գրիգորեան, Մկրտիչ Գարամիրեան, Ղազար Կիրակոսեան, Գեորգ Հանէսեան, Խորէն Բրոխորանեան, Գեորգ Ալէկեան:

Արմտանի խնդրոյն մէջ ծայրայեղ մատնութիւն

ընողներու և դեռ ընելու պատրաստ սև սիրտ մատնիչներուն անուանքը.—

Եղիա Էլպիկեան, Ազարիա Էլպիսեան, մ. Արապետ Լուսինիկեան, Ջաքար Գլըճեան, Թօփալ Աարդան Քիպրիթեան, մ. Գէորգ Պոյաճեան (միւտիր), Կարապետ Պէրպերեան, Քերովբէ Քէօսեան (պատուելի), Սեդրակ Հանէսեան, մհ. Ղազար Նահապետեան, Գէորգ Կօկունեան, Նշան Աէնճեան և Նշան Աէնճեան:

Ճնշման տակ մատնութիւն ընողներու և զղջացողներու անունները.—

Նշան Եսիկեան, Գէորգ Էլպիկեան, Կարապետ Այլպեան, Գաբրիէլ Այլպեան, Քերովբէ Վիւրեղեան, Մանւէլ Գարաբէշիշեան, Ղուկաս տ. Աարդապետեան, Աբրահամ Աէպիեան, Կիրակոս Քէօսեան, Ստեփան Ճորտեան, Աբգար Յովհաննէսեան, տիկին Խորաթ Գլըճեան, տիկին Եուզիկ Եղեկեան, տիկին Վատար, տիկին Նօխուտ:

Ասոնցմէ դուրս ոմանք մեռած ըլլալով, յիշել զանց ըրինք:

Այժմ ող մնացող բանտարկեալներուն անունները և տրւած վճիռներուն չափն ու տեսակը այս է.—

24 Հոգի մահուան դատապարտուած.

Մհ. Գալուստ Արխանեան, սօքթ. Կարապետ Փաշայեան (պօլսեցի), Մկրտիչ Աէնճեան, Միսակ Սըլոյեան Ղուկաս Աարդապետեան (ակնեցի), Ճանիկ Ժամիոզեան, Ջաքար Գլըճեան, Յակոբ Խաչմանեան, Կիրակոս Քէօսեան, Խաչատուր Քէրէմեան, Նշան Քէշիշեան, Յովհաննէս Մուրատեան, Գրիգոր Մկրտիչեան, Միքայէլ Եղեկեան, Գէորգ Նահապետեան, Մուշեղ Ճորտեան, Մանւէլ Յէր Յակոբեան, Երանոս Չէփիճեան, Աբգար Յովհաննէսեան, Աարդան Քիպրիթեան, Սահակ Գլպիկեան, Ղազար Էքսերճեան, Եղիա Ջարտիկեան, Գէորգ Աէպիեան (բանտէն փախած ու զարնւած). —

Հինգ Հոգի ցկեանս բերդարգելութեան դատապարտուած.

Մատնիչ Եղիա Էլպիկեան, Եղիա Ծովիկեան, Նշան Եսիկեան, Ալիքսան Ալիքսանեան, Նշան Տէօլէթեան.—

22 Հոգի առժամայ բերդարգելութեան դատապարտուած.

Յ. Աարդան վարդապետ (քէմախցի), Տ. Կարապետ Եղեկեան, Մկրտիչ Պոյաճեան, Սարգիս Ծովրիկեան (տիվրիկցի), Կարապետ Մէնէստեան, Մարգար Մէնէստեան, Աւետիս Սոբիկեան, Մկրտիչ Թիւթինճեան, Կարապետ Այլպեան, Գաբրիէլ Այլպեան, Գէորգ Աէնճեան, Ազարիա Էլպիկեան մատնիչ, Կարապետ Լուսինեան մատնիչ, Յարութիւն Գրիգորեան, Քէրովբէ Վիւրեղեան, Տիգրան Էլպիկեան, Աարդան Պոյուճեան, Մ. Կարապետ Ալիքսանեան, Կոչմոս Օրմանեան, Քաղէոս Քէրէմեան, Մկրտիչ Միւնէեան, Խաչատուր Փափազեան (զիմարացի):

Տրւած այս ծանր վճիռները բոլոր բանտարկեալք, բացի Կարապետ Լուսինեան մատնիչէն, կատարեալ անտարբերութեամբ և իրենց արհամարանքը յայտնող լրջութեամբ մտիկ ըրին և առանց յուզելու դէպի բանտ առաջնորդեցան:

*
**

Աճուաբեկ ատենի պատժական ճիւղի նախագահին առարկութեանս տեղեկագիրը:

(Թարգմանութիւն Թուրքերէնէ ի Տայ)

Քաղաքական յանցանք վերագրելով Երզնկայի նախնական դատարանի պատժական ճիւղին՝ 1894 դեկտեմ. 3 թւականին պատժական օրինագրին 57-դ յօդուածին տրամադրութեան համաձայն մահապարտութիւնս տնօրինող դրւած վճիռը բոլորովին արդարութեան հակառակ ըլլալը և անմեղութիւնս բացարձակ յայտնի լինելը հետեւեալ ապացոյցներով ակնբեր է.—

1) Իբր պարզ տեղեկութիւն նկատուած և ընդունելով կարգացուած տեղեկութեանց վճռի արձակման մէջ անկարեւոր նկատելիք և վկաներուն սովորական երդումը տեղի ունենալէ վերջ և վկայութեանց միջև տեսնուած հակասութիւնները և անտեղիութիւնները ըստ սովորութեան արձանագրելով տեղեկութեանց մէջ, հակասութիւն գտնուածներուն վկայութիւնները չընդունել հարկ եղած լինելով հանդերձ, այս ճշմարտութիւնը յարգուած չէ:

2) Բժշկութեան պատրակաւ Արմտանները երթալըս յանցապարտութեանս փաստ կը բռնէի կոր. ասիկա պատրակ և սուտ չէ. կառավարութեան շնորհիւ կայսերական բժշկական վարժարանէն դիպլոմա ստացած և բժշկական արհեստը ազատապէս ի դորձ դնելու արտօնեալ բժիշկ մ'եմ: Արմտան երթալս տ. Յակոբի դարմանմանը համար ըլլալը ընդհանուրին կողմէ հաստատուած իրողութիւն մ'ը լալով հանդերձ, ասոր սխալ մեկնութիւն տալով դատապարտութեանս իբր զէնք դորձածելը անտեղի և բոլորովին անարդար է:

3) Էլպիկեան Եղիայի տունը մէկ քանի անձերու հետ դուրսարելով խռովարարութեան շարժառիթ ըլլալու մասին, վերոյիշեալ իբր պարզ տեղեկութիւն կարգացուած քննութեանց նախելով, յիշեալ գումարման վայրը Արխանեան մհ. Գալուստին, Եղիկեան Միքայէլին, Ղարաբէշիշեան Մանւէլին, Չէփճեան Երանոսին, Պոյաճեան Մկրտիչին ևս ներկայ գտնուելին կհասկցուի կոր, սակայն իմ Արմտան գտնուած միջոցին այդ անձերուն ալ Պոյիս գտնուելը և իրարու երես բնաւ տեսած չլինելն իս կանխաւ մասնաւոր աղերսագրով դատարանին ներկայացուած անցագրերուն քննութեամբ երևան գալիք ճշմարտութիւն մ' էր, սակայն այս մասին մանրախոյզ քննութեան մը չգործադրելը և ճշմարտութեան ի յայտ ածման մէկ հատիկ այս ճշմարտ միջոցին քողարկեալ մնալը դրւած վճռոյն անարդարութիւնը երևան կը հանէ. եթէ այսպիսի մեծ դատերուն մէջ անցագրերը և բոլոր արհեստաւորաց արտօնագրերը պաշտօնական թղթեր չնկատուէին, ճիշտ ասոր նման անձողութեան խնդրով ամբաստանեալ Փիւնկեանցի Աստուրին անպարտութեանը փաստ և ապացոյց բռնելով չէր արձակէր և հետեւաբար մանրամասնութիւնները նախնական դատարանին ներկայացուած 1894 նոյեմբերի 29 թւականաւ և 261 թւահամար յայտարարուիր և այս մասին դրւած վճռագիրը և քննութեանց թղթերը

քննելով՝ դրանք վճարողն ապօրինի է ճշմարտութեան հակառակ ըլլալը երևան պիտի գայ՝:

Ստուգարութիւն Տարբոր ՓԱՇԱՆԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Դ Ե Ր Զ Ա Ն Ի

I

Դերձանի մէջ կատարւած հարստահարութիւնները պատմելէ առաջ մի քիչ ծանօթութիւն տանք այդ գաւառի մասին:

Դերձան արեւելքէն արեւմուտք կիսնայ Կարնոյ եւ Երզնկայի մէջ տեղը, իսկ հիւսիսէն՝ Բարեբոյ, հարաւէն՝ Գուգուչան եւ մասամբ Բղի կը պարփակեն իրենց մէջը: Երբ րատ դեռ Վարնոյ դաշտերէն կը մտնէ Դերձանի սահմանը եւ մասնակի շեղումներով կուգայ մինչև գաւառին սիրտը՝ Կողեր գիւղին տակը, ուր բնութաներով Տուղլա Սուխի ըսւած գետակը (սա Դերձանի արեւելեան հարաւի լեռներէն կիջնէ) եւ Մամախաթունի առջևէն կանցնի ոչորապտոյտ ընթացքով, ճեղքելով Դերձանը, Սառայի կիրճէն կը մտնէ Երզնկայի դաշտը: Ամբողջ գաւառը լեռնադաշտային կարելի է համարել: Հողը խիստ բերրի, մեծաւ մասամբ մշակելի: Բարձր լեռներ չունի. միայն հարաւային կողմէն կը բարձրանան Տարոսի ձիւնապատ լեռանց գոտիները:

Որովհետեւ Դերձանի մեծ հարստահարիչները Գուգուչանէն եկած են, հոս կուղեմ ծանօթացնել այդ տարաբաղդ գաւառն այր:

1850-1860 թւականներին Գուգուչանի մէջ 15-է աւելի հայաբնակ գիւղեր կային. կարելի է իւրաքանչիւր գիւղի բնակիչները 30 տուն համարել եւ ամեն մի տուն 10 անձ, որով եղած պիտի լինէր 450 տուն կամ 4500 հայ բնակիչ այդ գաւառի մէջ, ուր այսօր 50 տուն ալ մնացած չեն: Գիւղացի մը, որոյ շահագործութիւնը միայն երկրագործութիւնն է, որ այնքան աշխատասէր, չարքաչ եւ սակաւապետութեամբ սպրտով, բաւականաչափ հող ալ կուտանայ, ինչպէս պիտի գողթէ, ինչու չպիտի իւր բնակավայրն ու իւր ապրուստի միջոցները պահէ: Թէ ինչու.— որովհետեւ Գուգուչանի մէջ հաստատուող յայտնի Չարէքի ջիւրը աղաները անօրինակ բարբարոսութիւններով ու կեղեքումներով այնքան նեղեցին, այնքան սրտեցին խեղճ հայերին, որ Երզնկայ, Կարին, Պալիս դատարանները երկար դեգերելէ վերջ, չկրնալով երբէք լսելի ընել տալ իրենց արդար բողոքները եւ ուրեք կերպով չկրնալով գոհացնել, բաւականութիւն տալ այդ աղաներին, ճարահատ թողին ամեն ինչ հայրենի տուն, անդաստան, որք այնքան սիրելի եւ քաղցր էին նրանց, եղան քարուքանդ, խեղճ եւ թշուառ: Թէ ինչպէս նահանգապետները կը թողադրին, ինչպէս եւ կառավարիչները, ջիւրը աղաներին, նախ որ հայեր էին ենթակաները, հարստահարողները, երկրորդ որ շարունակ իրենց նւէրները պահելու ներքեւ ալ չէին մտապահիր:

Շատ դիւրաւ կարելի է հաստատել մեր գրածը, եթէ վերոյիշեալ քաղաքացի դատարանների արձանագրութեանց անորակները քրքրելն կամ մեր պատրիարքարանի դիւանատունը մի քիչ պարզաւի, կամ աւելի լաւը եթէ դեռ միացող աւերակներին այցելութիւն մը արել եւ տեղոյն վրայ քննութիւն մը բացել: 10-15 տարի առաջ Դերձան դաշտը, եթէ այսօր ալ այցելէ, չպիտի հաւատայ, թէ սա իր առաջւան տեսած երկիրը ըլլալը: Այն շէն ու ճոխ տները, ուր հարիւրաւոր անոցորդներ կը կերակուէին, այսօր յետին չքաւորութեան ու ինքզնութեան մասնաւոր են, մինչդեռ անցն

ամեն անթի, տկող թուրքերն եւ քիւրդերն, որ հայոց դռները կը կշտանային, այսօր դրամի տէր, աղա, բէկ եղած են:

Դերձանի հայերը, որ 1500 տունէն աւելի կը հաշին, ամենք ալ գիւղերու մէջ հաստատուած լինելով, երկրագործութեամբ կը պարապին եւ ունին բաւականաչափ վարելահող: Արդէն Մէրքէչիին, Մամախաթուն կարեւոր տեղ մը չլինելով, երկրագործ հայեր չկան. միայն կան քանի մը պանդուխտ հայեր, որ առեւտուրով կը գրադին:

Դերձան իւր շրջակայ գաւառների Շիրակը կը համարել. վասնզի խիստ արգասաբեր հող ունի: Եւ երբ Դերձանցի հայն ալ հողատէր է եւ ինք կը մշակէ իւր հողերը, ինչպէս հասոյ այսօր այդ երկրին հայերն վերջին ծայր արջատ են եւ ճնշւած անվճարելի պարտքերի տակ միթէ դեղիութեամբ կապին կամ թէ ծրլ են, չեն աշխատիր. ոչ, դերձանցիք վերջին ծայր պարզ կհազելն եւ չտեսնւած սակաւապետութեամբ կապին: Ամերիքան կտաւէ եւ տեղական մանուսայէ շինւած էնթարի մը 3-4 տարի կը հագնին, կերածնին ալ իրենց թանջուրն ու չոր հացն է, աշխատութիւնին ալ անդու ու անդադար: Ուրեմն պարզինք երկու խօսքով. նախ որ վերջին տարիներս սուլթանի կառավարութիւնը մասնաւոր դիտում մ'ունեցեր է նրաթապէս տկարացնելու, ընկճելու հայերը, հանելով նոր տուրքեր եւ ծանրայնելով առաւել եւս արդէն եղած տուրքերը, գրգռելով թիւրք եւ քիւրդ տարրը հայուն դէմ, որ կեղեքեն, հարստահարեն, երկրորդ՝ երբ Դերձանցի հայերը գրամի փոխառութեան պէտք կունենան, չլաւած տոկոսներով կառնեն. այնպէս որ անկարելի կըլլայ վճարելը: Ասոր մասին ալ տխրի խօսենք վարը:

Կառավարութեան անիրաւ պահանջումները կամ տուրքի անուշով ըրած կեղեքումները.—

Արդէն անկարելի դարձած, մասնաւոր վճարելու անկարող աղքատներուն համար, զինուորական տուրքը երկար տարիներ պանդխտութեան մէջ գանուղներուն ալ մնացողներէն կուզեն եւ կառնին:

Տասանորդի արդէն ծանրացած տուրքը ծախելէն դատ, բռնաւորների կամայականութիւններն ու անիրաւ պահանջումները չափ ու սահման չունին. ամբարած դորեն, գարի եւ այլն ուղած տեղերին անվարձ փոխապել կուտան, քիւրդ եւ թիւրք յելուղակներու կողմէ դիտամբ վառւած խտտերուն եւ ցորենի բարդերուն տասանորդները կը հաւաքեն, ինչպէս եւ բանջարեղէններու. կուզէ փչացած ըլլայ տարապայման բարձր գին կը պահանջեն եւ կառնեն:

Տարին 3-5 օր ամեն մարդ տարապարհակ ճամպաները կաշխատեցնեն. չաշխատողներէն 25-ական զրուշ կը պահանջին:

Տրոց հաւաքման համար Հակիէ միւտիւրին ժանդարմներ օրերով շարաթներով գիւղերը կը նստին առանց մէկ փարայ վճարելու եւ որ աւելին է 18-20 հեծեղադորք, իբր դըրսէզարի ճանապարհների ապահովութեան հսկող. օրերով հայոց գիւղերը կը մնան, ոչ միայն թէ իրենց եւ թէ ձիւրուն համար բան մը չեն վճարել, այլ յելուղակների պակասը իրանք կամբողջացնեն:

Հարկահաւանք հայ գիւղացիներէն միւտուոյն տուրքը տարին 3-4 անգամ կառնեն, որոյ համար հարկ եղած տեղեր բողոքներ ու դիմումներ եղած են, բայց ընաւ լսելի չեն ըլլար: Ինչպէս ըսինք կառավարութիւնը հայոց մասին ամեն գրկանք եւ հարստահարութիւնք դիտամբ հաշուով մը ընել կուտայ:

II

Դերձանի հայերուն ամենէն մեծ դժբախտութիւնը քիւրդ աղաներուն դրացի գանուղն է, այս աղաներուն շատերը իրենց շահատակութիւններովը արդէն հրապարակւած են. բայց որովհետեւ Դերձան մտապաւած ու ետ մնացած է, որ ոչ իւ մասին զրոյ մը ունեցած է եւ ոչ ալ հետաքրքր

ևող մը, ուստի քերթդ աղաների այս երկրի հասուցած ան- հաշուելի շնամաներն ալ թագուռն մնացած են:

Այս աղաներուն մէջ հռչակաւոր են չարէքլինները. այ- ժամ մեծ տեղ կը բռնեն Շահ Հիւսէյնի որդի Հայգար բէկ, Ղարադէվրէնոյցի Հասան աղա, Ֆէմ-ախտոցի Մէմէտ ա- զային սղայքը, Շըզ գեղի աղաները՝ Խելիլ աղա, Կէ.ք.քոյին սղաքը, Շէթերու աղաները, Կուռէչյի աղաները եւ ուրիշ- ներ: Ստանք 15-20 սարիներէ ի վեր մարախի եւ թրթու- ռի-նման թափած են Դերջանի վրայ, կերան եւ կուտնն գետ ինչ որ մնացած է: Հողին շատ լինելովն է, որ ժողո- վուրդը կարողացաւ ցարդ դիմանալ, եթէ ոչ անբազր գու- զուլչանցիների նման հոս ալ հայոց պերեզմանաքարերը մնացած պիտի լինէին ցայսօր:

Մամախաթուռնէն 4-5 ժամ հեռի, դէպի սրեւերեան հա- րաւ, կը գտնուի Խաչ գեղը. երբեմն զուտ հայաբնակ էր, բայց այսօր հազիւ 40 տուն հայ մնացած է: 20-էն աւելի ալ քերթի տուն լեցած է: Այս գեղի հայ բնակիչները 10-12 սարիներէ վեր չկրնալով սովալ իրենց դրացի Շըզ գեղի աղաների հարտահարուածեանց եւ յափշտակութեանց, ամբողջովին լցւած են Կարին, կարծելով թէ դատ ու դա- տաստանով պիտի կարենային իրենց իրաւունքները ձեռք բերել: 3-4 սարի տեգերեցան խեղճերը եւ երբ զգացին թէ իրենց բողոքները լսող մը պիտի չըլլայ, ոչ ալ իրենց վրայ արգահատող մը պիտի գտնուի, դարձան նորէն իրենց գեղը կատարեալ խեղճութեան մէջ, թողնելով հողերի մեծ մասը սոյն բռնաւոր աղաներուն:

1891 թ. այս գեղէն թմեկանց երկու եղբայր արտը աշ- խատած ժամանակին, Ղըզլ Հասանի-Խաչ գիւղէն հազիւ մէկ ժամ հեռաւորութիւն ունեցող բոլորովին թուրքարը- նակ գիւղ մէ-թուրքերը զինեալ յանկարձակի կը յարձա- կին վրանին երկու եղբայրը կսկսին մանգաղով, փայտե- րով զիրենք պաշտպանել: Թմեկեան եղբայրք գեղեցիկ քոյր մը կուտնան, որ ինչպէս միշտ, այդ օրն ալ քաղաքին մէջ կը գտնուի Վաւաշուտ թուրքերը այդ օրիորդը առեւանգե- լու կուզան եւ որովհետեւ թմեկեաններու քաջութեան փորձը առած են, այս անգամ ալ կը դաւադրեն նախ երկու եղբայրը սպանել եւ յետոյ ձեռք բերել իրենց անարը, բայց կը սխալին Այս անգամ ալ թմեկեանք 30-40 զինեալ յե- լուզակների գէմ քաջաբար կը պաշտպանին զիրենք. քոյ- րերին միւս մանկամարդների եւ անչափահասների հետ կը փախչին գեղը՝ հաւար կը պօռան: Մինչ հաւարը կը հաս- նի, թմեկեաններէ մին փորէն դաշոյնով խղատած կըլլայ. միւս եղբայրը, թէեւ դարձեալ վիրաւոր մի երկու տեղէ, բայց կը յաշողի երկու թուրք գէն ի ձեռին բռնել: Հաւա- րի համող գիւղացիք ի փախուտտ անապարտող զըզըլ-հա- տանցոյ թափթփած գէնք, կոշիկ հաւաքելով, երկու կաւա- նաւորները հետ կը զրկին Մէրքէզը, տեղեկագրով մը ալ պատմելով եղած եղեռնագործութիւնը. բծիչկ ու պաշտօն- եայ կուզան. քէֆչի, թէ մեռողին եւ թէ վիրա- ւորեալին համար բարձրութիւնը կը տրւին Ղըզլ-հասանցիք ամեն ուրեք ալ կը ճանցւին կը բողոքւին, վկաները շատ, բայց լսող չկայ, խլացեր են: Կարին, Պոլիս հեռագիր կը վարուի, բայց ոչ մի արդիւնք. եղեռնադործը եւ ոչ մի օր իսկ կը բանտարկւին:

1894 թ. սեպտեմբեր ամսոյ մէջ երկնկացի հայ երիտա- սարդ մը առեւտուրի համար կերթայ այդ գեղը: Գիշեր մը զինեալ երուզակներ այդ երիտասարդի գտնուած տեղակալը կը շրջապատին, դռները կը խորտակին ու ներս կը խուժեն: Սարսափահար կը մնան ներս գտնուողները եւ ընտ. դիմա- վորութիւն չեն կրնար ընել Յիւրզակների ամբողջ իրեզն- ները եւ ապրանքը՝ 100 լիրայէն աւելի, կը հաւաքին, խեղ- ճերը լաւ մ'ալ գանապոծելէ վերջ կը մեկնին անվախ ու հանդիստ: Քանի մ'օր վերջն ալ միւսնոյն յերուզակները գիւղին ամբողջ նախկինը կը քշեն կը ամանեն, խոտի դէզե- րը կը վառեն եւ այլն:

Այս գեղից պատճառով Խաչ գեղի հասանքը ամբողջապէս կ'ան- յառնուի:

պէս ըսինք, Ղըզ գեղի արիւնկեակ աղաները այս գեղա- ցոց էին դրացի, հիմայ ծոյերնուն մէջ մտած են: Մէմէտ աղա անուն յերուզակապետը Խաչ գեղի մէջ կը նստի: 1892 թ. այս նշանաւոր յերուզակապետները պատուանշան- ներ ստացան սուլթանի կառավարութիւնէն. երեւի երկ- րին անգնահատելի ծառայութեանց համար...


Երբ ըսինք, թէ սուլթանի կառավարութիւնը Հայաստա- նի մէջ հայ տարրը փճացնելու համար մասնաւոր դիտում մ'ունեցել է, միթէ կը սխալինք. ամենօրեայ փաստերը այդ կը ցուցնեն. ինչո՞ւ յերուզակապետները կը խրախուս- ւին, պատուանշան կը ստանան, մինչդեռ ատոնց յատկանի- չը ի սկզբանէ միայն եղած է քանդել, թալանել, աւերել: Սուլթանի բռնապետութիւնը իր այդ նպատակի իրագործ- ման համար պարզ կերեւայ, որ քերթ տարրը միջոց մը ը- րած է:

Մէրքէզէն իբր երկու ժամ հեռի դէպ արեւմուտք, Դեր- ջանի կեղրոնը կը գտնուի 100 տնուր հայաբնակ Կոտեր գեղը: Այս գեղի մէջ տեղացի յայտնի առեւտրական տուն մը կար՝ Պէրպէրեան Մինաս եւ որդիք 93 թ. յուլիս ամսոյ մէջ Պէրպէրեանի երկու երիտասարդ որդիքը 25, 30 տարւան, իրիկուն մը իրենց քաղաքին հետ սայլերով տուն վերադարձած ատենին, գեղէն հաղի մի քանի վայր- կեան հեռի, կամուրջին քովը, երկու ծպտուալ քերթերի ըն- վօլվերի գնդակներէն կը սպանուին: Մամիջապա լուր կը տրի կառավարութեան, որ բծիչկ եւ պաշտօնեաներ կը զրկէ քէֆչի համար: Վատնոգի կառավարութեան ընելիքը կարծես թէ այդ միայն ըլլայ, ադիկց անդին անցնելու ձեռնահասութիւնը չունենայ: Ընդ Պէրպէրեան կը բողոք- քէ, կը հեռագրէ, ի գուր. կանցնին ամիսներ, լսող, կարեւո- րութիւն տուող չկայ:

Չանխաչի, Աղազեր, Թառու, Ծերանի, Ծաղկարի, Վր- ժան, Ապրանք. այս գեղերը Մէրքէզէն 4-7 ժամ հեռա- ւորութեամբ դէպ հարաւ արեւմուտք իրարմէ կէս կէս ժա- մն միջոցաւ յանկոյտ Եփրատայ, գրեթէ Տաւրոսի շրթա- յին տակը տարածուած են: Վերջին սարիներս քերթդ աղա- ներուն այս հայաբնակ գեղերու հասուցած վնասները ան- հաշուելի են: Երկար կըլլայ, եթէ հարստահարութեանց մանրամասնութիւնը պատմենք: Քիչով ալ կը յուսանք, թէ պիտի կարենանք հասկցնել իրաց վիճակը:

Ըսինք թէ Դերջանի մեծ կեղեքիչները Գուզուլչանէն եկած են: Այո՛, չարէկցիները Գուզուլչանի տիրանալէ վերջ, քիչ քիչ այլ եւ այլ եղանակներով մտան Դերջան եւ 5-6 տարւան մէջ իրենց սահմանը գտնուող բոլոր գեղերը իրենց ճիրանին տակը առին: Քանի մը հտոր արդէն բղքուած են, որոց տեղեր այժմ հայի անշնչացած յիշատակները մնացած են: Աքաղձոր, Ասող, Թառու եւ երկու երեք փոքրիկ գու- մերու մէջ 120-էն աւելի հայ տուններ կային՝ բոլորն հողա- տէր. այսօր կեճեկցիին եւ դարադէւրէնացիին սեփակա- նութիւնները դարձած են ու լեցւած քերթերով: 93 թ. դեռ 5-6 տուն մնացած էր Թառու մէջ. մէջերէն յայտ- նի էր Ստեփան Մինասեանը. շատ անգամներ Ստեփանի տաւարները կը գողան, խոտերը կը վառեն, բայց Ստե- փան կը մնար, վասնզի կապրէր հողերովը: 93 թ. յուլիս ամսոյ մէջ, գիշեր մը երբ տունէն բացակայ կը լինի Ստե- փանը, քերթերը օգուտ քաղելով, խոտի խուրճեր կը դնեն տանը չորս կողմը ու կը բռնկցնեն: Աղէխարը կը լինի ներախններուն լացն ու կոծը: Գիւղացիներ չեն համարձակելը դուրս ելլելու. կը վառի տունը մինչեւ լոյս: Տարաբախտ գոհերը տան մէկ նկուղը կապաստանին. առաւօտուն փը- լատակներէն կը հանւին երկու սղայ խեղուած, միւսներն ալ կիսահեղձ. տունը իր մէջլիններովը մոխրակոյտ մը կըլլայ: Ընդ Ստեփան երբ կը լսէ եղածը, գլուխը կը ծեծի եւ իւր վատոյժ ու մերկ ընտանեաց ձեռներէն բռնելով կերթայ մէրքէզը՝ Մամախաթուռն, արդուեւալ կուտայ, կը պատմէ իւր կրած ոգճբախտութիւնները. բայց կառավա- րութիւնը, կարծես թէ իրեն չվերաբարձրայ այդ գողոցը, քնաւ-

կրեանագործները գանելու չձեռնարկելու, մինչդեռ կրեանագործը յայտնի եւ վկայք շատ կանոնի ամիս մը, Ստեփան համալուրով, որ Մամախաթուէն իրեն օգուտ մը չկայ եւ որ մտաբարով իր ընտանիքն ապրելիս անհնար է, յուսահատ իր գործարար ընտանեացի հետ կերթալ, կը մնայ կերեղ զեղ: Ստեփանի դեպքէն վերջ մնացող հայերն ալ կը կոչւին դեղէն: Այսպէս Թառուն իր հողերովն կանցնի զիւրդ աղայից ճանկը: Միւս դեղերը՝ Չանախճի, Աղաղեր, Միւրանի, Թէեւ դեռ կը մնան հայերը, բայց տեսնել պէտք է, որ մարդ կարենայ ըմբռնել ասոնց վիճակի անտանելիութիւնը: Ամէն մէկ գեղի մէջ հազիւ մէկ-երկու տուն հացի տէր մնացած են. միւսները եթէ իրենց տուն տեղը եւ ամբողջ հողերնին պարտքի փոխարէն ասան, դարձեալ չեն կրնար ազատիլ: Այս երեք չորս տարւան մէջ շատ կը խօսուի, որ պարտքի փոխարէն իրենց հողերը յանձնել զիւրդ ազաններին:



ՀԱՅԿՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՍՏՆԱԿՆԵՐԻՄ

Ան օրից սկսած, երբ Սասունի սարսափելի կոտորածը յայտնի եղաւ լուսաւոր աշխարհին, այդ օրից Հայկական հարցը չի իջնում արժատանանքի մամուլի էջերից: Մենք արդէն ծանօթացրել ենք յիշեալ մամուլի կարծիքների հետ խօսել էինք նոյնպէս եւ այն բազմաթիւ միտմանքների մասին, որ տեղի ունեցան Ազգայնական Ամբիկայում եւ այլն: Մատնանիշ էինք եղել, որ թէեւ սուլթանի կատակարութիւնն արգելում էր ներդաշնակ մամուլի թղթակցներին գնալ Հայաստան, բայց եւ այնպէս «Դէյլի Տէլիգրաֆ»-ի թղթակից Նովի Դիւտը յարթեցավ գանազան խոշորոտներ, կարողացաւ մուտք գործել պոստէ: Այդ անվերջ թղթակցի օրինակին հետեւեցին անգլիական այլ նշանաւոր թղթակիցի թղթակցներ: Նրանք հասան այդ թշուառ երկրը, մտան տուտակաւ ժողովրդի բոլոր խաւերը, այցելեցին կոտորածի վայրերը, այրած, ամայի, քար ու քանդ դարձրած վայրերը, ուր տեղի ունեցած մի քանի հարիւր ստանցիներ միտք, քաղցած... Թղթակիցները զրի են անցնում բոլոր իմաց աշքով տեսածը, իրենց լսածը եւ ամփոշապէս հետազորում կամ ընդարձակ նամակներով հարորդում Լոնդոն:

Տպւում, արտասուում են այդ հարորդութիւնները բազմաթիւ թերթերում, արագին ցնցում, գարայթ յառաջ բերում ընթերցող հասարակութեան գանազան շրջաններում: Լուսաւոր երկրի հասարակութիւնը ապշել, գայրացել է, որ այդ տեսակ գազախոթիւններ, մի այդ տեսակ կատարեալ դժոխային դրութիւն կարող է տիրապետել XIX դարու վերջում ներդաշնակ մեծ պետութիւնների լինելու, որոնք դժբերով իրենց դաշնակցները, իրենց տւած մեծ մեծ-խոստումները, համբերում, թոյլ են տալիս այն բոլոր...

Ամբողջ մամուլը, ի բաց առեալ տարձակաւն. փարսնեղով կաշուած ներդաշնակ եւ ամբողջական մի քանի թերթեր, բողբոջում, հարւածում է պետութիւնների եղեռնագործ անտարբերութիւնը:

Մամուլի բողբոջների վրայ աւելանում են վերջերս լայն տեսած մի քանի զորքի ամբողջական ներքալ տարձակաւն դրութեան եւ մասնաւորապէս Սասունի սարսափների:

Նորից բազմաթիւ միտմանքներ են կազմակերպւում, տեղի ունենում թէ Ազգայնական եւ թէ Ամբիկայում: Անգլիայում տեղի ունեցող միտմանքներում ինք տպագրութիւն են գործում երեք սասունցիների պատմանքները. այդ խեղճները առեւտրից հրաշքով էին սպասուել եւ մի կերպ հասել Լոնդոն:

Նշանաւոր էր մամուլանոյ այն մեծ միտմանքը, որ տեղի ունեցաւ Լոնդոնում Ապրիլի 25-ին, Արգայնի դուքսի նախագահութեամբ. մասնակցողների թիւը արագին է կոչել հարիւրից աւել պարլամենտի անդամներ, ներկայացուցիչներ անգլիական, ամբիկական եւ ֆրանսիական գանազան քաղաքներից, ներկայացուցիչներ մամուլի կողմից. բազմաթիւ համակրական նամակներ, հեռագրեր եւ այլն:

Արտասանած ծանոթը, թէ նախագահ Անգայնը, թէ մի տիկնոջ եւ թէ միւսներին զննել տպագրութիւն են գործել. նոյնը եւ մեծ ծերունու՝ Գլադստոնի միտման նախագահին ուղարձ նամակի ընթերցանութիւնը:

Բողբոջները, այդ բոլոր ժողովների վճիռները արժանազորում, ուղարկւում են պետական ներկայացուցիչներին: Բողբոջներ են կազմում Ազգայնի իւրաքանչիւր մի անկիւնում, ամեն մի շքանշանում եւ չիւստային Ամբիկայում: Պատգամաւորութիւններ են ներկայանում Գլադստոնին, արտաքին գործոց նախարար Կիմ-սթըւլսին, վերջին օրերն էլ մինիստր նախագահ Բոլթոլին:

Այս բոլորը մի քան միայն հայցում՝ միջամտել փոխել վերջ դնել Հայաստանում տիրող այն գարշելի սեփմը,

որի անսարգ ծանրութեան տակ դարերով հեծում, դժոխային շարժարաններ է կրում մի ամբողջ ազգ:

Ինքնբերէյ իրեն ներկայացած պատգամաւորութեանը պատասխանեց մամուլականից դիպլոմատին յարուսել մի ծառայող: Եւ ինչ կարելի էր սպասել արդարադատ պետական ներկայացուցիչներից: Նրանք միջամտեցան բարենորոգումների մի նախագիծ առաջարկեցին սուլթանին, բարենորոգումներ, որոնք «կրճատիւթեան եւ նրանուլթեան» մի նոր դարազարուս պետի բացին բազմաշարքայ հայերի համար:

Թէ ի՞նչ տեսակ բաներորոգումներ են, պետութիւնները խոչընդոտար գաղտնութեան մէջ են պահում: Լրագիրները նախարարար հարորդեցին այդ նախագիծի մի քանի կէտերը, մենք կը քննենք այդ թէ-ֆորմները մանրամասնօրէն, երբ նրանք յայտնի կը լինին ամբողջովին: Բայց եւ այնպէս պարզ է չնայ այժմանից, որ յիշեալ քարենորոգումները չափաի իրենն իրեն կերպ կըրուիներ:

Ուրեմն անսարգ բեռը պիտի մայ դարձեալ հայ ժողովրդի շինքին: Դե այդ միջնէն երբ, միջնէն երբ պետի համբերնք: Ժողովուրդը, քնիկ տարձակայ տարբը արուէն փոխել վերածուել է. այդ մեզ ցոյց տւին մէկը միւսին հետեւող անցքերը: Նա այժմ ընդդիմանում է սուլթանի կատակարութեան գանազան կամայականութիւններին. նա երես առ երես կուում է նրա հետ. նա այժմ՝ ազատութեան դրօշակը պարզած քաղաքակ պատերազմ է յայտնել դարերով իրեն ծնող ոյժի դէմ: Բայց նա՛ միայնակ, գուրի գէնքից, մեղքներից, անգոր կը լինի հաւասարակշռել իր ոյժերը թշուառ ոյժերի հետ, եթէ մենք բոլոր նրան օգնութեան չգտնը:

Րուսէն, ներկայ րուսէն ծանր է եւ խորհրդաւոր. հարկաւոր է օգնել անհրաժեշտ է մեզ թափել, որ սկսված յեղափոխական շարժումը իր նպատակին հասնի, որ մեր բազմաթիւ գոհիկ ստիւնը իր գինը ստանայ, որ սուրբ գործը իր յաղթանակ տանի:

Երբ օտարները յուզած, վրէժնդրութիւն են պահանջում մեզ համար, մի՞թէ մենք անտարբեր կը մնանք, մի՞թէ մենք հանգիստ խոցով կը շարունակենք խաղող կեանքի պատուիրակ վայելել, երբ այնտեղ մեր եղբայրները՝ հայաւճած, ուրիշ, բայց եւ այնպէս պարզած յեղափոխական դրօշակը, օգնութեան նշան էր մեզ կարգում: Մի՞թէ մենք իտու կը մնանք, բախիկ անք այդ ինքզու ծայրը: մի՞թէ մեզ հանգստութիւն կը տան հազարաւոր սասունցիների ուրախակամները:

Օգուտներ րուսէից, կատարները մեր պարտքը:

ՆԻՊՐԱՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՑԱԿ
 Վրէժից 100 րուբ., Կոլեիդայից 120 րուբ., Փ-ից 50 ր., Թ. Կ. Խ. 200 ր., Ապառաժից 1000 րուբ. Ժառագայթից 22 ր., Գ-ի գիթից 50 ր., Գեաշից 15 ր., Ճառագայթից 150 ր., Բ-ից 3000 (երեք հազար) րուբ. — Բթ-ից 6 լեբա:

Վիշապ քաղաքի կերպ. սնդուկի մէջ ստացւեցան:
 Մուշեղ 100 դահեկան, Ես. Ս. 26 դահ., Վաղարշապետի 70 դահ., Սիւնիք 80 դահ., Շաւարշ 25 դահ., Սասան 10 դահ., ՊՅ 60-դ 10 դահ., Ա. Կ. Կ. 40 դահ., Ա. Կ. Գ. 30 դահ., Բազար 40 դահ., Գալուստ 20 դահ., Վառօդ 100 դահ., Սարդ 100 դահ., Բար 35 դահ., Վիշապ քաղ. Սիսակ 112 դահ., Շուշան 10 դահ., Մուր 20 դահ., Նիզակ քղ. 340 դահեկ.:


Տ-ի կօմ-ի գնձում Գաղտնիքից ստացւեց 3 օսմ. ոսկի:
 Բօլդ. Սլ. քաղ. Վ. Մ. Թ. -ից 3 նապօլ. ոսկի:

Գոտիքը ուղարկել է մեզ իր մի նամակի պատճէն, որը անկարող եղար գետեղել այս թիւում. կաշատեսնք այդ անել երկու անգամ: Յուսով ենք, որ նրա եսկականն եւս հրատարակած կը տեսնուի:

Խոշորում ենք «Հայքից» յայտարարել, որ «Դրօշակից» պատուաբար նամակի վերանագրել իր «Յ-քի» խմբագրածն է եւ ոչ «Դրօշակ»:

Դաշնակցութեան պնծանքներից ինչուրում է թղթակցութեան եւ ներխուտութեան համար դիմել
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.
 Վիլենա, Դաշնակցութեան ազատ սպարան

ԴՐՈՇՆԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Ր Է Ֆ Օ Ր Մ Ն Ե Ր Ը

II

15-ն Յուլիսի 1895 թ.

Մենք ասացինք, որ ներկայումս եւրոպական պետութիւնների շահերը պահանջում են՝ պահպանել Փոքր Ասիայում քաղաքական ներկայ պայմանները, statu quo, որովհետեւ Եւրոպայի թէ քաղաքական և թէ հասարակական յարաբերութիւնները գտնուում են այնպիսի փափուկ և վտանգաւոր դրութեան մէջ, որը ներկայ պետութիւններից խստորէն պահանջում է խոյս տալ պատերազմից, որի բորբոքիլը սպառնում է առաջ բերել ամբողջ քաղաքակրթւած աշխարհում սոցիալական յեղափոխութիւն: Այս վտանգն է, որ ստիպում է պետութիւններին փոխադարձ զինուձեւերով, արհեստական միջոցներով ձգձգել ներկայ խաղաղութիւնը, խաղաղութիւն, որի հիմքը այնքան խախուտ է, որ շատ երկար չի տևիլ և մի սարսափելի դժոխքով կը փլուի՝ իր տակն անելով միլիոնաւոր զոհեր, ահագին հարստութիւններ...

Եւ ինչպէս չսարսափի դրանից պառաւ Եւրոպան, որ նոյնպէս հիւանդ է, ինչպէս բաշխուող սուլթանի կառավարութիւնը...

Այժմեան պետութիւնների կեանքում սկսել է փրտածութիւն, նեխութիւն, նրանց ներքին կեանքը քայքայման շրջանի մէջ է մտել. այս շատ լաւ գիտէ իւրաքանչիւր պետական մարդ, դիպլոմատ, բայց և այնպէս նրանք գործ են դնում ամեն միջոց, մարդկային բոլոր ոյժը, որքան հնարաւոր է ձգձգելու, պահպանելու իրերի ներկայ դրութիւնը, որ ճակատագրաբար դէպի անկումն է գնում, և այդ շատ բնական է: Ինչպէս անհատական կեանքում կայ «գոյութեան կռիւ», կայ և հաւաքական կեանքում. — նոյնանման շահեր ունեցող անհատները բնականօրէն համախմբուում են

մրցելու, իրենց գոյութիւնը պահպանելու մի այլ խմբի հաւաքական ոյժի դէմ: Այս երկու խմբի շահերը հակառակ լինելով միմիանց, նրանց մէջ մղում է «հաւաքական գոյութեան կռիւ» բացի անհատականից, և այդ դասակարգային կռիւն է, որ մեր օրերում՝ գործարանական, մէքենաների շրջանում՝ քաղաքակրթւած աշխարհում հասել է իւր բարձր աստիճանին:

Ահա այս դասակարգային կռիւն է, որ քայքայում է ներկայ պետութիւնների կեանքը, այս դասակարգային կռիւն է, որ այսօր քաղաքակրթւած երկրների հասարակական ու քաղաքական կեանքին սպառնում է մի այնպիսի փոթորիկ, որ տակն ու վրայ պիտի անի ամենայն ինչ՝ արմատապէս փոխելով թէ տնտեսական ու քաղաքացիական յարաբերութիւնները և թէ մարդկային հասարակութեան ամբողջ կազմակերպութիւնը: Եւ այդ մտալուտ փոթորիկն է, որ զարգանում է հսկայական քայլերով սարսափեցնում քաղաքակրթւած աշխարհը. այդ վտանգն է գլխաւորապէս, որ ստիպում է պետութիւններին զինուել քամել երկրի ամբողջ հիւթը, սպառել նրա ոյժը, մնալ միլիարդներ զինւորականութեան համար, որպէսզի ոյժի միջոցով կարողանան խեղդել սպառնալիքը, ճնշել փոթորիկը՝ պահպանելու իրերի ներկայ դրութիւնը, հասարակական ներկայ պայմանները, պայմաններ, որոնք ստեղծւած են հովանաւորելու տիրող դասակարգի շահերը, որ ասել է թէ՛ պահպանելու և՛ ներկայ պետութիւնների շահերը, նրանց գոյութիւնը:

Իսկ միւս կողմից իւրաքանչիւր պետութեան գրկում զարգացող անհատական արդիւնաբերութիւնը, պահանջում է նրանից բանալ, հաստատել վաճառանոցներ, շուկաներ արտահանութեան համար, փնտրել, նրւածել երկիրներ շահագործելու, հակառակ դիպածում նրան սպառնում է սնանկութիւն:

Խոշոր արդիւնաբերութեան այս բնաւորութիւնն է, որ աւելի և աւելի զարգացնում է դասակարգային կռիւը ու սրան տալիս սուր բնաւորութիւն և համ էլ

ստիպում, պահանջում է պետութիւններից՝ դուրս գալ մայր-երկրից, նւաճել երկիրներ և փնտրել, հաստատել գաղութներ, կոլոնիաներ, ինչ գնով էլ լինի: — Նրանք պատերազմում են, զոհում բազմաթիւ զաւակներ, երիտասարդ կեանքեր, ոչնչացնում մարդկային վայրենի ցեղեր, մտնում ամենամահառոյժ երկիրներ՝ արտահանութեան, շահագործութեան համար: Եւ նրանք անում են այս բոլորը իրենց գոյութեան համար, նրանք անցնում են դիակների վրայով՝ կեղեքելու, որովհետեւ այդ է պահանջում նրանց գոյութիւնը, այդ է պահանջում անհատական խոշոր արդիւնագործութիւնը:

Իսկ Տաճկահայաստանը այս տեսակէտից թէ իւր հարստութիւնով և թէ իւր աշխարհագրական դիրքով ներկայանում է իբրև շահաւետ երկրներից մէկը, առանձնապէս երկու պետութիւնների՝ Անգլիայի և Ռուսիայի համար: Արդէն Հայոց պատմութիւնից էլ յայտնի է, որ Հայաստանի դժբախտութեան պատճառներից մէկը իւր աշխարհագրական դիրքն է, իբրև դուռը, իբրև Արևելքի և Արևմուտքի ձանափոր, որի վրայով անցել են Ասիայից Եւրոպա արշաւող բոլոր վայրենի, բարբարոս ցեղերը՝ կոտորած ու սրածութիւն անելով: Նա, Հայաստանը, այս տեսակէտից էլ այսօր պահպանել է իւր ոյժը. նւաճելով դրա վրայով էլ է ուզում անցնել Ռուսիան ընդլայնելու իւր սահմանները, իսկ Անգլիան, իբրև Ռուսիայի մշտական հակառակորդը Արևելքում, այդ տեղ էլ է ուզում նրա առաջն առնել, արգելք լինել նրա շահագործական ձգտումներին, ի հարկէ ոչ թէ մարդասիրական զգացումներից դրդւած, այլ՝ որ նա վնասում է իրեն: Հայաստանը միևնոյն ժամանակ միացնում է և Սև ծովի բայձնի ու նրա հետ կապւած արդիւնագործութեան վաճառահանութիւնը Պարսկաստանի հետ՝ Տրապիզոնի-Էրզրումի-Թուրքի գծով: Հայաստանի այս դիրքի և բնական հարստութեան պատճառով է, որ եւրոպական պետութիւններից իւրաքանչիւրը ձգտում է իրեն համար ունենալ ազատ ձանապարհներ, բանալ շուկաներ ու շահագործել այս պատճառով է, որ իւրաքանչիւր պետութիւն ունի իւր որոշ շահերը, բայց, ինչպէս ասացինք, Անգլիան և Ռուսիան, համեմատաբար միւսների հետ, Հայկական խնդրում առանձին դիրքի մէջ են, իբրև Արևելա-Արևմտեան պետութիւններ, որոնք անհամեմատ միւսներից աւելի մեծ շահեր ունին Արևելքում. ուստի և սրանք աւելի են հեռաբերւած Հայկական խնդրով, Հայկական շարժումով: Բացի սրանից Հայաստանի վիճակը կապւած է Տաճիկ պետութեան վիճակի հետ, իսկ սրանը Արևելեան հարցի և Եւրոպայի, ուստի Տաճիկ պետութեան վնասումով յօգուտ մի այլ

պետութեան, կորչում է ներկայ քաղաքական հաւասարակշռութիւնը, որը եւրոպական խաղաղութիւնը վեր-դուրս առնալու ամենավտանգաւոր ֆակտորներիցն է և այս պատճառով է, որ պետութիւնները աշխատում են փոքր Ասիայում պահպանել statu quo: Պարզ է ուրեմն, որ սուլթանի կառավարութեան գոյութիւնը, նրա ամբողջութիւն պահպանելը ներկայումս մի անհրաժեշտութիւն է եւրոպական պետութիւնների համար՝ իբրև մի պատնէշ հակառակորդ ոյժերի մէջ. մի թեթեւ խանգարումն անգամ մէկի կողմից կարող է առաջացնել ընդհարում ոչ թէ երկու գլխաւոր հակառակորդների մէջ, այլ մի միջազգային պատերազմ, շնորհիւ այն կապակցութեան, որ պետութիւնները միացած են միմիանց հետ — Գերմանիա-Աւստրիա-Իտալիա, Ռուսիա-Ֆրանսիա, Անգլիա-Իտալիա: Սրա վրայ աւելացրէք և այն, որ սրանց եւրոպական յարաբերութիւններն էլ նոյնպէս միշտ լարւած դրութեան մէջ են, որովհետեւ շահերի ընդհարում տեղի են ունենում նոյնպէս և եւրոպական հողի վրայ. միւս կողմից էլ, չպէտք է ուրանալ և ազգային ինքնասիրութիւնը, շովինիզմը...

Ահա այս տեսակ փափուկ, կնճռոտ, բարդ, լարւած և վտանգաւոր պայմանները ու յարաբերութիւններն են, որ ստիպում, պահանջում են եւրոպական պետութիւններից փոխադարձ զիջումն անել որքան հնարաւոր է՝ ներկայ խաղաղութիւնը պահպանելու, որովհետեւ, որ կէտի վրայ էլ ընդհարում լինի՝ Եւրոպայում թէ սրանից դուրս՝ առաջ է բերելու միջազգային պատերազմ, որից սնրսափում, զարհուրում է իւրաքանչիւր քաղաքակրթւած պետութիւն, որովհետեւ, ինչպէս ասացինք, նրանց սպառնում է միջազգային սոցիալական յեղափոխութիւնը:

Եւ ինչ կասկած, որ «մարդասէր», «քաղաքակրթւած» ներկայ պետութիւնները զոհ կը բերեն ոչ միայն մի ամբողջ ժողովուրդ, այլ մի քանի ժողովուրդներ իրենց շահերի համար, չվճռվելու եւրոպական խաղաղութիւնը, հանդիսատես չլինելու սարսափելի՝ մինչև այսօր մարդկութեան կեանքում չտեսնւած հասարակական կատաստրոֆային, ականատես չլինելու իրենց «հասարակական մահաւն», թէև պատմութիւնը և մարդկութեան կեանքի զարգացման օրէնքները իրենցն են անելու ստիպելու ներկայ պետութիւններին խոնարհւել իրենց առջև և տեղի տալ...

Zine

ԴԱՆԱՃԱՆ Մ. ԹԻԻԹԻԻՆՃԻԷՎԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Կերտնական Կօմիտէն մայիս 7-ի իր 61-դ նստին մէջ, որ հաւաքական վճիռ մը գումարած էր քանի մը անձերու նկատմամբ (այդ նստին մէջ էր, որ հաճի Տիգրանի մահւան վճիռը արձակեցաւ), քննութեան ենթարկեց և վերահասու եղաւ այն տպագիր ստուգարաններուն (document) և մանրամասն տեղեկագրերուն, ներկայացած էին նախկին յեղափոխականի մը, դաւաճան Մկրտիչ Թիւթիւնճիէվի կեանքի և վերջին երեք տարիներու հանրածանօթ գործունէութեան մասին:

Աւստի, ի նկատ աւնելով, որ վիրաբոյժ Մկրտիչ Թիւթիւնճիէվ ոչ միայն դասալիք մը եղած է յեղափոխական բանակէն, այլ և կարևոր գաղտնիքներ երեւան հանած և իր նախկին յեղափոխական ընկերները մատնած է, և թուրք ոստիկանութեան ձեռքը հզօր ու անարգ դործիք մը եղած է հայ յեղափոխականի անունն աղարտող:

Կ ե դ ո ն ն ա կ ա ն Կ օ մ ի տ է ն մ ի ա ձ ա յ ն մ ա հ ա ն դ ա տ ա պ ար տ ե ց դ ա լ ա ճ ա ն Մ կ Ր տ ի չ Թ ի ւ Թ ի ւ ն ճ ի է Վ Ը:

Ղճուին գործադրութիւնը յանձնելով Ջոհ Կօմիտէին ահաբեկիչներու գնդին:

—Յունիս 11(ն. տ. 23), կիրակի երեկոյեան ժամը 9-ին Թիւթիւնճիէվ գիշերհագուստով նստած էր իր տան առջև (Կէտիկ փաշայի թաղ) և կը խօսակցէր իր անեցիներուն և դրացիներուն հետ, որոնք խնւած էին փողոցին մէջ քիչ մը մաքուր օդ ծծելու և զօսնելու համար: Յանկարծ երկու ահաբեկիչներ, ջրհանկիրի հագուստով ծպտած, որոնք երկար ժամանակէ ի վեր կը հետապնդէին Թիւթիւնճիէվը, կանգ կառնեն դաւաճանին դիմաց, և անոնցմէ մէկը պաղարիւնով իր ատրճանակը քաշելով կարձակէ անոր վրան: Ղերջինս ցաւի ճիչով աջ կողմին վրան կիյնայ, մինչ անտին փողոցին մէջ գտնւող մարդիկ փախչող փախչողին կը լլան:

Նոյն միջոցին զափթիէ մը և ոստիկան մը, որոնք պատահմամբ կը գտնուէին մէկը փողոցին վերին և միւսը ներքին ծայրը, կծիկը կը դնեն, երբ ատրճանակի ձայնը կը լսեն:

Երկրորդ ահաբեկիչը այդ միջոցին կարձակէր իր ատրճանակն ալ, և երկուքը միասին կը սկսին հեռանալ իրենց գործն աւարտած համարելով:

Կէտիկ փաշայի ոստիկանութեան պահակը շատ մօտ է Ղճուին գործադրութեան վայրին, սակայն ոստիկանները, երբ Թիւթիւնճիէվի զարնւելուն լուրն առին, ոչ միայն չփութացին օգնութեան հասնելու, այլ մինչև անգամ քիչ մը ուշացան դիտմամբ, ահաբեկիչներուն հետ դէմ դէմի չբռնուելու համար:

Դաւաճանը զարնող քաջերն արդէն բաւական հեռացած էին, երբ ոստիկանները միանալով գիշերապահ-

ներու և փողոցի մէջ պատահած մարդերու, սիրտ ըրին վերջապէս անոնց հետքով երթալու:

Ահաբեկիչները «Թաւուզ-պազար»-էն անցան «Մահ-մուտ-փաշա» և արդէն հասած էին «Մարբուճճի-ները», երբ հալածողներու խումբը, որ գլորւող ձիւնի գնդակի պէս, հետզհետէ սոււարացած էր, աւելի ու աւելի կը մօտենայ ահաբեկիչներուն: Բազմաթիւ ոստիկաններ և գիշերապահներ, բազմութենէ քաջալերւած, կը ջոկին հալածող խմբէն, և հայհոյանքներով կը դիմեն ահաբեկիչներու վրայ, ալ վերջապէս ձերբակալելու յուսով: Ղճուական վայրկեանը հասած էր. «Մարբուճճիներէն» անդին իրենց դրութիւնն աւելի պիտի դժարանար և ահա երկու քաջերը յանդուգն փորձ մը փորձեցին. ետ դարձան և «Մապոնճի» խանին փողոցին մէջ կրակ տւին հալածողներուն վրան: Փորձը սքանչելի արդիւնք ունեցաւ, առաջին գնդակն արդէն բաւեց ցիրուցան ընել այդ վախկոտ խէզներու խումբը:

Երկու վայրկեան ետքը փողոցը պարպւած էր և երկու ահաբեկիչները «Հասիթճիլարի» կողմէն հանդարտ ու անվախ իրենց ձամբան շարունակեցին:

Թիւթիւնճիէվ ծանրապէս վիրաւորւած էր. գնդակներէն մէկ մուած էր ստորին որովայնի մէջ, ուրկէ անհնարին եղաւ հանել, իսկ միւսը ազդր ծակած անցած էր:

Ղճուին գործադրութեան գիշերն իսկ ոստիկանութեան նախարարի օգնական Հիւսի պէյը անձամբ եկաւ հարցաքննելու վիրաւորեալը, իսկ նազըմ փաշա խորապէս յուզւած իր հաւատարիմ ու կարող պաշտօնեային գրուին եկած դժբախտութեան վրայ, ծանօթ վիրաբոյժ Գամպուր օղլուն խրկեց վիրաւորեալը դարմանելու և մահւան ծանկէն ազատելու:

Ոստիկանութեան համար անգնահատելի ստացում մըն էր այդ դաւաճանը, և զարմանալի չէ, որ անոր զարնւիլը երկու յեղափոխականի ձեռքով մեծ յուզում առաջ բերաւ բոլոր շրջանակներուն մէջ և անմիջապէս հեռագրուեցաւ եւրոպական թերթերուն:

Սօֆիայի վրայով մեր խրկած հեռագրին մէջ ըսած էր թէ մահամերձ է Թիւթիւնճիէվը և իրօք երկու շաբաթ չարաչար տանջել և մահւան դէմ մաքառել է ետքը, վերջապէս սատկեցաւ յունիս 27-ին:

Սուլթանը սաստիկ կատաղած Թիւթիւնճիէվի անձին դէմ կատարած այս փորձին, որ երրորդն էր իր տեսակին մէջ (Արտաշէս, Հաճի Տիգրան), քանի մը ամիսներու միջոցին, խիստ հրամաններ տուաւ նազըմ փաշային Ղճուին գործադրիչներն որոնելու և պատժելու: Անթիւ ձերբակալութիւններ ամեն թաղերու մէջ:

Ոստիկանութիւնը բան մը ըրած ըլլալու համար ձերբակալեց խեղճ ջրհանկիր մը, որ ոչ Թիւթիւնճիէվ կրցաւ ձանձնալ և ո՛չ այն գինեպանը, որուն խանութին մէջ Ղճուին գործադրութեան նախընթաց գիշերը երկու ահաբեկիչները երեցած էին: Բայց ոստիկանութեան համար պատուի խնդիր մըն էր ձերբակալել գոնէ անոնցմէ մէկը, և ահա այլ և այլ սպանալիքներով ստորագրել տւին գինեպանին թուղթ մը,

որով ինքը կը վկայէր թէ ձերբակալած շրջանկիրը երկու ահաբեկիչներէն մէկն էր: Այդ խայտառակ գործըն անամօթաբար պաշտօնապէս ծանուցեցաւ, թէ և առաջուց գիտէին թէ ոչ ոք պիտի հաւատար:

Ջրհանկիրի հազուստով ծպտած երկու ահաբեկիչներն ալ ապահով ու ազատ են իրենց նախկին տարազին մէջ:

Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

ԵՐԵՎ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՆԱՄԱԿ ԿԱՐՈՆՆԵՑ)

Հազար ու մի տեսակ մտածմունքներով . շրջապատուած, հոգիս այնպէս, թողնում եմ էրզրումը, հինաւորաց բազմախիշատակ քաղաքը, իւր մառխլապատ տեսքով ձանձախարիթ աներով, շտապում եմ հեռանալ, ազատել երեւակայութիւնս կաշկանդող այդ մթնոլորտից, յուսալով, որ լեռնային ազատաշունչ սղոխը իւր հովհատ թևերով շոյելով ձակատս, պահ մի պիտի ցրէ սրտիս դառն կսկիծը:

Կը յառաջանամ Գէւէբոյի լեռանցամիջով. եւրոպացի հիւպատոսներու խումբը կառքերով ու նժոյգներով, փափկասուն տիկնանց ու գեղանազ օրիորդներու հետ միասին կը շրջապային ծաղկաւէտ լեռանց վերայ, վայելելով անմահ օդն ու ջուրը, որից զօհած են երկրի բնիկները, հարազատ որդիները. . . Գաղանի լրտեսներ կը շրջապատին նոցա. հազիւ կարելի է գաղտագողի ակնարկներ փոխանակելով, բարև տալ և հեռանալ: Նոցա կառախումբը արդէն հասել է նէբիջայ կոչած կայարանը, հրբ մի հայ երիտասարդ, գունաթափ և դողդոջ մօտեցաւ ու հատկելալ հագագներով իմաց տաւ, թէ մերձակայ ձորում սպանւած երեք մարդոց դիակներ կան, և թէ այնտեղ զինւորներ կը շերջին: Ոչ ոք կը հաւատայ:

«Մի՞թէ կարելի է, ասում էր դր. Գրոսման, որ ամենաբանուկ ձանապարհի վըայ, էրզրումից հազիւ մի ժամ հեռի, արքունի ձմերանոցին այսքան մօտ միաժամանակ երեք սպանութեան դէպքեր կատարւին: Ամենափոքր ձայն մի և ահա պահապան զինւորները օգնութեան կը փութան. այդ անհնարին է, անհաւատալի է, դա հայոց չափազանցութիւններից է»: Ի՞նչ անէր նա, յանցանք չունէր, չէր գիտէր, որ ինչ որ Սև ծովի այն կողմ անհաւատալի կը թւի, այս կողմ, Անատոլիի մէջ սովորական դէպք է սոսկ. նա զարմանում էր և իրաւունք ունէր զարմանալու, թէ ինչպէս կարելի է, որ խաղաղութիւնը ապահովելու համար նշանակւած զինւորները օգնութեան չեն փութար, չգիտնալով, որ դոքա իսկ են ամենից պժգալի ոճրագործները: Ապրած Եւրոպայում, նա չէր կարող հաւատալ, թէ իսկապէս հայերը անամօթ կառավարութեան դրըդմամբ մահմեդական լիրբ ֆանատիկոսներու ձեռամբ տանջուում են, զրկւած մարդկային արժանապատուութիւնից, ամենայն իրաւունքից. նա կարծում էր, թէ

ինչ որ հայ և եւրոպական մամուլը կը հրատարակեն, լոկ հայերի չափազանցութիւնն է. ինչպէս կարելի է, որ յաջ քաղաքակիրթ աշխարհի օրինական ձանչւած մի պետութիւն գործէ կամ թոյլ տայ գործել այդպիսի անյուր խժգժութիւններ իւր հաւատարիմ հպատակներու նկատմամբ:

Երիտասարդի ստիպողական թախանձանքի վերայ այն կողմ դիմեցին անգլիական հիւպատոս Միստր Գրեյվս, իտալական հիւպատոս Մօնակօ, «Իէյլի նիւզի» թըլթակից Մ. Սկուտաձօր և ուրիշ շատեր, նոցա հետ և գաղանի ոստիկաններ՝ Ալի Խարի, Մուրատ: Հետաքրքրութիւնից մղւած կը դիմեմ այն կողմ:

Կառքերու և ձիերու տրոփիւնը լսելով, մի քանի թուրք զինւորներ, սկսան յափսիբերս բարձրանալ լեռան կողերով ու անյայտացան ձմերանոցում:

Երիտասարդ հայը հուն ի հու հասնելով, ցոյց տւեց դիակը, բայց զարմացաւ, երբ մօտենալով երեքի փոխանակ միայն մի հատ տեսաւ: «Բայց կէս ժամ առաջ ես այստեղ տեսայ երեք դիակներ և միայն զինւորներ կային այստեղ», կաղաղակէր նա խելալեղ: Եւրոպացիք խնդրեցին տիկնաներուն, որ հեռանան, զի մի գուցէ վերաւորեն նոցա փափուկ զգացումները. . .

Սպանւածը ունէր տարօնցու զգեստներ, կարմիր գունաւոր լայն շապուկ, մազոտ ապա, թօսիա գոտի, կարմիր գեղջկական գուլպաներ և տրեխներ: Իւր քովը ընկած էր մի դատարկ պայուսակ. հաւանականօրէն, սպանչի կողմից դատարկւած: Երևի, թշւառ զոհը երկար դիմադրել էր, որովհետև դաշոյնի երկու խոր վէրքեր կային ստամոքսի վերայ, ձխտ արմունկը բոլորովին ջակնւած էր, ամբողջ մարմինը կապոյտ պալարներով ծածկւած, քիթը կտրւած; աչքերը փորւած, կզակը ջարդած, գլուխը մաշկազերծ, պարանոցը կիսովին կտրւած: Երեք ուրոյն դիակներու արեան հետքեր կային, կայլակները շաղ եկած ծաղիկներու վերայ. . .

Գր. Գրոսման լռեց և գլուխը տարուգրելով «վերջացել է», ասեց: Այն ժամանակ անգլիական կոնսուլատի թուրք կաւազը մօտենալով, յարեց. «Ի՞ճեր, այսպէս շարունակ կամբաստանէք մեզ, թէ չարագործները իսլամներն են. ահա հայերու գաղանութեան պարզ ապացոյց. հնար է միթէ մահմեդականի մը իւր դաւանակցի նկատմամբ այսպիսի վայրագ գործ կատարէ»:

— Բայց արդե՞օք մահմեդական է, հարցուց Սկուտաձօր:

— Անշուշտ, պատասխանեց նոյն կաւազը. չէք տեսներ զգեստները:

— Այո՛, ընդմիջեց հայը, բայց խնուցի հայն էլ այդպիսի զգեստներ ունի. հայը միւսիւրմանէն որոշող նըշան կայ. նայեցէք, թըխաուա՞ծ է թէ ոչ: — Բժիշկը նայեցաւ. հայ էր: Երիտասարդը յուզւած կը խօսէր. «հրաման տւէք և ես զօրանոցներու միջէն հանեմ միւս երկու դիակները»: — Այդքանն էլ բաւական է, ընդմիջեց Գրեյվս. հեռանանք. հիմա կը հասկնանք ամեն բան: Իսկ թուրքերը կը պնդէին, թէ դա բուքէ խելուած մէ, գազաններն են յօշոտել. . . այսքան էլ լիրբ:

Բոլորի աչքերից բարկութեան կայծեր կը թափին, ոմանք յուսահատ կը շարժին գլուխները, ոմանք բարձ-

րաձայն կը բողոքին բռնութեան դէմ և ձայները ազատ քամու թևերու վրայ կը սաւառնէին հեռի և հեռի... անմարդի լեռներում:

Վերջին անգամ տխուր ակնարկ մի ձգեցի այն կողմը, ուր երեք թշուառ զոհեր ո՞ գիտէ ինչպիսի անագորոյն չարչարանքներով վերջ էին դրել իրենց արգէն թշուառ և բազմաչարչար կեանքին, և խոր հառաչ մի արձակեցի...

Այնտեղ տեսայ և մի օտարական, որ գրեզը ի ձեռին կը ձգէր մանրամասն նկարագրել սպանւածը իւր յարակից առարկաներով:— Դա «Դէյլի Նիւզի» անձնակերթ թղթակիցն էր:

Վ. Մայիս


ՆԱՄԱԿ ՏԱՐՈՆԻՑ

Ապրիլ 22-ին եւրոպացի դէլէգատները և թուրք կոմիսէօնը բարձրացան Շատախ տեսնելու Շէնիկ, Ալմալ և Գէլի-Գուզան. ի հարկէ, բոլոր տները այրւած, մի քանի նորաշէն խղիկներում տեսան մի քանի ազատեալ հայեր, որոնք ներկայանալով, ցոյց տւին այրւած եկեղեցին, տները և շէնքերը. ապա նրանց առաջնորդեցին Գէլի-Գուզան, համբաւաւոր և աշխարհահռչակ փոսերի մօտ, ուր գնդապետ Քէլֆնիգ բեգի հրամանով տէր Յովհաննէսի առաջնորդութեամբ այնտեղ անձնատուր բոլոր սասունցիք կոտորեցան անխնայ: Այնտեղ էր և գնդապետ Քէլֆնիգ բեգը, Գէլի-Գուզանի հերոսը. մտայլ դալուկը պատել էր նորա դէմքը: Խոճոռ և ծանր. նայւածքով, լուռ և մունջ դիտեցին, թէ ինչպէս քաջ սասունցիք կը պեղէին փոսը. ահա սկսան մարմինները յօշ յօշ երևան գալ, ժանտահոտութիւնը ծաւալեց ամեն տեղ, այնպէս որ քննիչները ստիպւեցան ուղարկել Մուշ ապանեխական զեղեր բերելու համար: Նոյն ժամանակ իրենք մտան Գէլիի աւերակները, ուր մէկ կին, անսւաղ ու մերկ, մերձենալով անոնց, արտասաւթօր աչքերով ցոյց տւեց ս. Գէորգ եկեղեցին, այրւած և քանդուած. «Այստեղ, աղաղակեց նա, էս սուրբ ժամի մէջ, վաթսուռն կնիկ ու ջահել աղջիկ պղծեցին ու մորթեցին, ես էլ հոն էի. մեր անարգեալ պատուոյ համար հայի՞ք (վրէժ) կը պահանջեմ»: Երբ ապանեխական զեղերն եկան, այն ժամանակ բացին ունի Պետոյի տան մօտ գտանուող մեծ փոսը, գտան տէր Յովհաննէսի մաշկազերծ մարմինը, ակնողիքը փորած և մէկ կապ վզին, ճիշտ այնպէս, ինչպէս նկարագրել էին սասունցիք. ապա դիակներու կոյտեր, մանր և մեծ, ծեր և երեխայ, այր և կին խորն լեցւած: Սարսափահար եւրոպացիք տեսան այս ու էլ չկարողանալով դիմանալ, հրաման տւին, որ իսկոյն գոցւին փոսերը. բաւական համարեցին քննութիւնը, չուզեցին գնալ այլ ևս Ցալուրիկ ու վերադարձան ս. Յովհաննէս, իսկ թուրքերն ի Մուշ:

Մահաբան տարրը իւր անգուսպ կատարութեան մէջ, անհամբեր սպասում է նոցա գնալուն, որպէս զի նորանոր Սասնոյ կոտորածներ յարուցանէ, վրէժխնդիր

ողով լեցւած՝ կը սպառնան չինայել և ո՛չ մէկ անհաւատ գեաւուրի. և «քրիստոնեայ», «մարդասէր», «քաղաքակիրթ» Եւրոպան լսում է այս ամենը ու հանդուրժում...

Մինչ ցե՛րբ:



ԲԱՐԵՆՈՐՈՎՄԱՆՑ ՆՇԱՆՆԵՐ

Բարիքները հիմակու սկսանք վայելել. կը խնդրենք «մարդասէր» դիւանագէտներէն, որ մեզ ապահով հասցէ մը ցոյց տան՝ զգացած երախտագիտութեան հաւաստիքնիս մատուցանելու համար:

Հնորհարաշխ սուլթանի կառավարութիւնը ծով գանձարանը լեցնելու և սոված պաշտօնեաները մի քիչ կերակրելու եռանդով՝ ինքն իրմէն դուրս ելած, ալ սկըսած է իր ոյժերը կեդրոնացնելու տուրքերու հաւաքման. ամեն օր իրար ետևէ Պոլսէն խիստ հրահանգներ կուգան՝ հին և նոր տուրքերը գանձելու համար: Առաւօտ կանուխ ելնողը հռչակաւոր մեթոդներ կատեղծէ այդ հրահանգները գործադրելու համար. վերջապէս միաձայնութեամբ ամենէն նախագաս կը համարուի աս մեթոդը, որ իր դիւրութեամբ սքանչելի արդիւնքներ տալու վրայ է. ահաւասիկ —

Քիչ շատ ունեւորներուն օձիքէն բռնել, մէկ տարւան տուրքը մէկ վճարով առնել՝ առանց խօսեցնելու, հիանալի փութաջանութեամբ կը գործադրուի. իսկ անկարողներն ալ շիտակ բանտ: Աճարողները մէկ կողմէն կարձակէին, միւս կողմէն ուրիշներ իրար ետևէ բանտ կը լեցւին. վերջապէս 50 հայի դրամագլուխ շարունակ կայ բանտը՝ տուրքի փոխարէն: Խեղճ մարդիկը որչափ կաղաչեն, օգուտ չեն. վերջապէս լսելով, որ օրինաց համեմատ կառավարութիւնը զերենք 91 օր բանտարկելէ յետոյ, տան կահ կարասիները ծախելով, պիտի գանձէ իր դրամը: Խեղճերը խնդրագրով դիմեցին վալի փաշային և խնդրեցին, որ զերենք արձակէ՝ ըսելով «մենք անկարող ենք այդ ստակը վճարել, մենք անօթի, զաւակներնիս սովատանջ, հազար տարի ալ կենանք այս դժոխքին մէջ, նոյնը պիտի ըլլայ. սուլթանի սիրոյն համար հիմակաւնէ դիմեցէք մեր տուները, կահ, կարասի, իրեղէններէն ինչ որ գտնէք, ծախեցէք, ծեր դրամը առէք, միայն թէ թողէք մեզ, որ աշխատինք մեր ընտանեաց դէմ չոր հաց մը ձարելու. իսկ եթէ աղքատ ըլլալնուս համար օրինաց առջև յանցաւոր կը համարուինք, այն ատեն տւէք մեր օրապահիկը»:

Խնդրագիրը մայիս 3-ին տւին, այսօր երեք օր է, պատասխան չէ տրւած:

Կրակէն փախչիլ ծովը ինյալն արգելւած է մեզ, շէնորհիւ շնորհարաշխ սուլթանի:

Գիւղացիներուն ևս խիստ նեղութիւն և տանջանք կուտան տուրքերը կանոնաւորապէս գանձելու համար. անասուններու ախոռները խեղճ գիւղացիներու ընակարան դարձան. վայ անոր, որ տուրքին վճարումը կուշացնէ. վայ անոր, որ անբարոյական զապթիկներու

քմահաճոյքը չի գոհացնէր. վայ անոր, որ փորձութիւն կուեննայ անիրաւ գանձումներու, անհամար զեղծումներու և հարստահարութեանց դէմ բերան բանալու, — հրացանի կոթերը իսկոյն կարկուտի պէս կիջնեն, և ձեռքը կապկպելով, ակոտին սիւնին կը կային. լիբք յիշոցներու հետ թուք ու մուրը անպակաս կը լայ ալ, մինչև որ գոհացում չի տրւի...

Արտերն անմշակ ու ցանաճներն անխնամ մնացին. յուսահատութիւնը մեծ է, գողութիւնները անհամար:

Գիւղացիները հոգինին բերանին եկած մի քանի անգամ խնդրագիր տւին վալի փաշային. առաջնորդն ալ ծանուցագրով մը բողոքելով եղած զեղծմանց դէմ, դատ պահանջեց յանցաւոր պաշտօնեաներու դէմ: Բայց ինչ օգուտ. մինչև որ առաջնորդը ինքը յանձնառու չեղաւ գիւղացւոց պարտքերու մի մասը 8 օրէն վճարելու, չքթողին խեղճ հարստահարեալներն: Ուր օր յետոյ կառավարութիւնը փառաւորապէս գանձեց 2700 դրուշ առաջնորդէն, թէև դատի կանչելիք ոստիկանները ազատ համարձակ յառաջ կը տանեն իրենց շահատակութիւնները:

Առևտրական գործերը կանգ առեր են, քաղաք և թէ գիւղ ծանր տագնապի մէջ են, կառավարութեան բարբարոսութիւնները օրէ օր կաւելնան. թուրք խուժանի թշնամութիւնը սաստկացած է, բանտերը անմեղ հայերով լեցած են. որո՞ւ դիմեք, մերկէ օգնութիւն խնդրենք:

Բայց ալ ամեն բան իր չափն ունի, մեր համբերութիւնը ալ հատաւ, դանակը վզին եկած է, ժողովուրդը վերաւորած է. հերիք, մեր գլխին հետ, կաշին հետ խաղացին. հերիք, մեր արդար իրաւունքին և հազարաւորներու արեան իրաւունքին վոյ կատակերգութիւններ կատարեցին և կը կատարեն սուլթանի հետ միացած այդ «մարդասէր դիւանագէտ» կոչւած շահասէր գազանները. թող հազարաւոր անմեղ զոհերու անէծքը թափի անոնց գլխուն, թող հազարաւոր անմեղ մանկանց, աղջկանց, կանանց թափած արիւնները խեղդեն նոցա. ալ չենք խաբւիր դիմակներէ, խաբկանքներէ, բարենորոգումներ ըսած ծակ կարկտաններէ:

Սուրը պատեանէ ելած է, տեսնանք որո՞ւ գլուխը կիյնայ:

Ն Ա Մ Ա Վ Պ Ր Ո Ւ Ս Ա Յ Ի Յ

Բան տարկութիւն: Բողոքական գրավաճառ մը դիրք ծախելու համար Պիլէճիկ կերթայ: Պիլէճիկի կոմիտէրը «Պեշմէյօր մըսըն քի ինճիյ պութալ օլան արթըք սաթըրմայաճագ: գուրան սաթըրաճագ» կըսէ. նոյնպէս նաև մութէսարիճը գլխուն անլուր անէծքներ կը թափէ և երկու օր բանտարկելէն վերջ «գիրք ծախելուն համար» ընդ հսկողութեան Պրուսա կը ղզկեն. քանի մը օր ալ հոս բանտարկած մնալէն վերջ միսիօնարներու միջամտութիւնով արձակեցաւ: Ազատելէն վերջ այս գրավաճառ գիրք ծախելու համար գնաց

Եէնիճէ գիւղ, բայց հոն ալ ձերբակալեցաւ և բանտարկելով Իյնէ-կէօլ անկից դարձեալ Պրուսա բերեցաւ, ուր վերստին միսիօնարները ազատեցին զինքը:

Եօզլատցի Խիլէնտէր Շիշմանեան անուն հայ մ' ալ բանտարկեցին Եօզլատցի լինելուն համար, 22 օր հաղորդակցութենէ արգելեալ վիճակի մէջ պահելով թէ զինքը, թէ կինը և թէ 10 տարեկան աղջիկը: Երկար բարակ հարցաքննեցին, թէև ոչինչ գտան, բայց իբր մեծ յեղափոխական ղզկեցին Պօլիս, հոն ալ 35 օր հարորդակցութենէ զուրկ հարցաքննեցին զինքը, Իհարկէ՛ ծեծով հայհոյանքով բայց դարձեալ ոչինչ յանցանք չգտնելով դատապարտեցին. սակայն եւրոպական դեսպաններու միջամտութիւնով արձակեցաւ:

Իբր թէ ազգային երգեր երգած լինին. Պիլէճիկի շրջակայ հայ գիւղերէն վարժապետ և հարուստներէն 8 անձինք Պիլէճիկի բանտին մէջ կը հեծին:

Սուլթանի կառավարութիւնը, որուն համար ամեն միջոց սուրբ է, հայը անանարկելու և չարչարելու, դաւաճներու մէջ պատահած հրդեհներն վերագրած էր հայ յեղափոխականներու գործ. այս սկզբունքով վերջեր, Պրուսայի մէջ պատահած հրդեհի մը համար բանտարկեց իբր Հոնիք Քէօթահեացի հայ արհեստաւոր մը, սակայն առանց որևէ ապացոյցի: Բանտարկեց նաև խարբերոցի Արարապետ անուն կաթնավաճառ մը իրեն ուղղեալ նամակի մը առթիւ, որոյ բովանդակութիւնն էր՝ «Սէքը լոյս վեց քաղաքները ազատեցան»: Յիշեալ նամակին կեղծ և շինծու լինելը ակներև էր, որովհետև առանց դրոշմաթուղթի, առանց կնիքի սուրհանդակի տուփին մէջ բաց գտնւած է:

Իբր վերջին նորութիւն. — կառավարութիւնը որպէս թէ ապահովելու համար հայ գիւղացիին կեանքը, պատիւը և գոյքը, կուսակալութեան մէջ ինչ որ տաճիկ, քուրդ, չէքքէզ աւազակներ, մարդասպաններ կային, ժողովեց և գիշերապահ անւան տակ ցրեց հայ գիւղերու մէջ պաշտօնանկ ընելով հայ գիշերապահները. ալ ապահովութիւն, ալ հանգստութիւն բոլորովին վերցաւ, գողութեան դէպքերը սկսան կրկնուիլ բազմապատկուիլ. գիշեր մը այդ գիշերապահները Մեծ-Նոր-Գիւղի հայոց եկեղեցիին դուռը աղտոտած են և ցերեկ ատեն ալ Պայրամի տօնին եկեղեցին գնդակահոծած:

Երկու տարիի չափ առաջ, երբ Բազար գիւղ գայմագամութիւն հաստատելու ձայներ կային, սկսան շրջակայ գիւղերու հայերը աշխատել, որ չյաջողի ատ: — Հեռու, մղոններով հեռու թող լինի մեզմէ սուլթանի կառավարութիւնը, կը գոչէին անոնք. որչափ հեռուէն հսկէ մեզի, անչափ լաւ է. վալի մը, գայմագամ մը, միւտիր մը իրենց արբանեակներով մեր արիւնը ծծող տղորակներ են. որչափ հեռու ապրինք անոնցմէ, անչափ ալ հանգիստ կը մնանք:

Որչափ իրաւունք ունէին անոնք:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Դ Ե Ր Զ Ա Ն Ի

V

Սէլիլ աղայի մասին արդէն թէ եւ գրեցինք, բայց աւելորդ չենք համարիլ տալ քանի մը լրացուցիչ տեղեկութիւններ եւս, իբր Պալատանի էջիւրէթներուն գլխաւորը: Սա արդէն լինելով ապստամբ, ամենէն աւելի կը վնասէ, կը կեղեքէ Դերմանի արեւմտեան կողմերի հայ բնակիչները: Պալատանի ժողովրդոց վրայ իր ազդեցութիւնը խիստ շատ է արդէն, մանաւանդ 8-10 տարի առաջ Մնձորեկի մէջ կատարած մարդասպանութիւնները, աւերումները երբ անպատիժ մնացին, ալ աւելի սարսափեցուցիչ եղաւ Սէլիլի անունը: Անամօթ սուլթանի կառավարութիւնը այս քանի տարւանս մէջ քանիցս կայսերական ներում չընորհեց, բայց Սէլիլ այդ ներումը չընորհեց երբէք իբր չընորհք եւ շարունակեց իր ընթացքը կամ թէ ալ աւելի անգթութեամբ սկսեց առաջ տանել իր աւերումները:

Եւթերցի Հիւսէին աղա 4-5 տարիէ ի վեր հաստատուած է Թւնիկու մէջ եւ արդէն բաւական հող ալ յաիշտակած է: Իր տղան եւ եղբայրները ըմբոստ են եւ արունկղակ յերուզակներ. ասոնց գործած աւերումներն ու տւած վնասներն ալ շատ ու շատ են, բայց որովհետեւ երկարեցաւ մեր տեղեկագիրը, չեմ ուզեր մանրամասնութեանց մէջ մտնել:

Հռչակաւոր Շահ Հիւսէին պէկի որդի Հայդար պէկ չըբաւականանալով հօրը թողուցած անթիւ հարստութիւնէն, ինքն ալ այսօր հետամուտ եղած է աղքատ դերջանցիները պոպկելու. ամին աշուն մօտ 50 ղինեալ յերուզակներով եւ կառավարութեան պաշտօնեաներով 4 ամի չափ կը քանդէ ու կաւերէ ամբողջ երկիրը, ամենախարդախ միջոցներով գործ կը բանայ խեղճ գիւղացիներէ հետ. ո եւ է գիւղացի մը, երբ ո եւ է հաշուով բռնելի Հայդարին հետ, վայ է եկեր ոչ միայն այդ գործ ընողին, այլ ամբողջ գիւղացոց զլիւռն:


Թւնիկի մօտը՝ Պուլմիշ գիւղի հողերը Շահ Հիւսէին հայրը ժամանակաւ գրաւած, յաիշտակած է պալատանցիներէն 1892 թ. աշունը 7 տուն թւնիկցիներ իբր մարապա կը տանի իր այդ Պուլմիշ հողին վրայ, փասձ ցորեններ կրտայ աշունը ցանելու համար: Գարուն կըլլայ քան չէ բուսած, գարնանացան ընելու ալ պալատանցիք չեն թողուր, կին, աղայ կը լեցին արօրներուն առջևը. վերջապէս այդ ամառը ձեռնուռայն կը մնան թւնիկցիք, մէկ երկուսը նորէն կը դառնան գիւղ. միւսներն ալ անօթի ու ծարաւ լքանելով իրենց ընտանիքը, կը պանդխտին Պոլիս: 1893 թ. աշունը Հայդար պէկ 50 յերուզակներով, մէծլիսի իղարէի էգաներով ու թափու քեաթիպիով կիջնէ Թւնիկ, ամենայն լրբութեամբ իր բոլոր մարդոցը համար ալ կը պահանջէ գառի եւ ոչխարի խորոված. կուտեն կուշտ ու կուռ, կը յագենան, կը կանչեն գիւղապետն ու յայտնի անձնաւորութիւնները «ձեր գիւղին 200 լիւրայ կը պահանջուի», կրտէ, «հիմայ փողեր», շատ աղայանք, շատ պաղատանք, մենք քու հետը հաշիւ չունենք, կրտեն, քեզի մարապաութիւն ընողները այս ինչերն են եւ անոնք ալ հոս չեն, անոնց հետ ինչ կուզես ըրէ: Հայդար հայտնութիւններով կը նախատէ եւ կը հրամայէ ձեծել իր դէմը խօսելու համարձակողները եւ կը պահանջէ, որ եթէ դրամ չունիք, հող աւէք: Ո՛վ տայ, ո՛վ է պարտական Թողունք միւս գիւղացիները, այն 6-7 տունն ալ ինչո՞ւ պարտական ըլլան Հայդարին. սերմը չէ բուսեր, արտերը պարապ են մնացեր, միթէ հայերը կրնային փտածը բուսցնել տալ կամ պարտաւոր է ին կուելու պալատանցոց հետ Կառավարու-

թեան պաշտօնեայ էֆէնդիները ամենքն ալ կը ծանրանան ու կը սպառնան զիւղացոց: Վերջապէս մօտ 10 օր ուտել խմելէ վերջ, առանց պաշտօնական գործողութեան, մարապութիւն ընողների տներն ու հողերը իբր թէ կը զբրաւէ: Կուգայ 94 թ. աշունը. գիւղացիք կիմանան, թէ Հայդարը դարձեալ կուգայ մեծ բազմութեամբ: Այս անգամ դիմում կըմեն պաշտօնեաներուն եւ կրտեն եթէ Հայդարը դարձեալ իր մարդիկներով մասնէ գիւղը, մենք պէտքէ գաղթական լինենք: Մէծլիսի էջա Կէօկէզիլլի Ալի պէկ կը պատասխանէ՝ հանդարտ կեցիք տեղերնիդ եւ դոհայուցէք Հայդար պէկը, եթէ ոչ ձեզ շատ գէշ կըլլայ. կոթերցի Պէրպէրեանի տղոցը սպանելը չտեսա՞ք, դուք ի՞նչ նշանակութիւն ունիք Հայդար պէկի համար: Վերջապէս շատ սպառնալիքներ, ծեծ, չարչարանք կը յաջողին ամենայն խժողութեամբ 200 լիւրայի մուրհակներ կորզել դժբախտ Թւնիկցիներէն. ի՞նչ պիտի ընեն, ո՞ւսկից պիտի տան:

Բայց ինչո՞վ մեղաւոր է քիւրդ աղան, մենք ինչո՞ւ կը ծանրանանք դարագէւրէնդցիի, կէճէնկցիի կամ մէկի, միւսի վրայ. նոքա կուզեն հողատէր ըլլալ եւ մեծ հողատէր, եւ ինչո՞ւ չըլլալ իրենց կողմն է թիրդ ոյժը, իրենց կողմն է կառավարութիւնը: Հայերը արդէն յուսահատած, չունին բարոյական բարձր իդէալ, չունին արտութիւն միանալու եւ պաշտպանելու զիրենք ընդդէմ դաւաճանին ու բռնաւորին: Բայց ի՞նչ կրտեն: Ինքնապաշտպանութեան գոհերի որք թւով նւազ չեն, արիւնները կը բողբոքեն. մենք բնաւ չենք կրնար մեղադրել հայ գիւղացին, նոցա կեանքը մարտիրոսի կեանք է. այս կողմերի հայերուն համար ապրելը օրը հազար անգամ մեռնել, նահատակիլ ըսել է: Անբախտ ժողովուրդ, այս չափ չարչարել ու տանջել եւ ոչ մէկ տեղ տեսնած է:

Ալ կրնա՞ք երեւակայել դերջանցիներու թշուառութիւնն ու խղճութիւնը:


Ղերջ



ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ՄԱԿԵՂՈՒՆԱՅՈՒՄ

- Մեր ընկերոջ Հաղորդածը.
- Յունիսի 9 (ն. տ. 21). Մի զինւած Հայդուգային խումբ Գերման սարի մօտ, Կարպինի վանքից ոչ հեռու ընդհարում ունեցաւ սուլթանի զօրքի հետ: Երկու օրւայ կուէից յետոյ Հայդուկներից սպանեցին 3 հօգի, 1-ը վերաւորեցին, 4 հօգի գերի ընկան: Իսկ զօրքից սպանեցին 17 հօգի, վերաւորւած են 6: Հայդուկային խմբի մնացած մասը Նիկօսի առաջնորդութեամբ հերոսաբար շարունակում է կռիւը: Մի ուրիշ տեղական Հայդուկային խումբ Աօջանսկում բաժանելով երկու մասերի մի կիրճում բոլորովին ոչնչացրեց զինւորների մի ամբողջ խումբ (մօտ 150 հօգի): Երրորդ խումբը այրեց Իստիվանեայ գիւղը:
 - Յունիսի 11 (ն. տ. 23). Առիւղ ապստամբների և զօրքի մէջ արդէն 5 օր է շարունակում է: Ամբողջ «Մրեդուրէկ» կուչած մասը (Պջիսա և Արիվա գետերի մէջ) շարժման մէջ է: Խմբեր գալիս են Պալանկայից, Արատօլօյից և Պրեչօլօյից. նոքա զինւած են մարտիկ հրացաններով:
 - Նոյն օրը, երեկոյեան ժամը 9-ին. Գերմանի մօտ կռիւը շարունակեց մինչև կէս գիշերը: Այդ գիշերը


ապստամբները անցան երկրի խորքերը չնայած մի նոր զինուորական գնդի գալուստ: Սպանւած են շատ զինուորներ, այդ թւում և մէկ միլիազիմ: Ապստամբականներից պակասում են 17 հոգի (փախած են թէ սպանւած, յայտնի չէ): Մնացած 47 հոգին կուսում են տաճիկների և ալբանացի դէմ: Դրամական նպաստներ հաւաքւում են ամեն կողմից:



Լոզանի համալսարանի բոլգար ուսանողներից Մակեդոնիայի ապստամբութեան առթիւ ստացել ենք մի ոգևորւած հրաւեր-ուղերձ, որտեղ նրանք ողջունելով հայ յեղափոխական շարժումը և յաջողութիւն ցանկանալով Հ. Յ. Դաշնակցութեան նպատակին՝ շեշտում են երկու վիճակակից ժողովուրդների միացած գործունէութեան վրայ: Մենք կը տանք սրա թարգմանութիւնը առաջիկայ համարներից մէկում:



Բոլգարիայի Ա. քաղաքից տիկին Ա. Թ. ուղարկել է իբրև նւէր Հ. Յ. Դաշնակցութեան իր ձեռքով գործած մի գեղեցիկ դրօշակ, որի նկարների շուրջը կարգացւում է «Մահ կամ Ազատութիւն» յեղափոխական դէպիզը:



Ա Մ Օ Թ Ը

Նքք Սասունի քաջարի ապստամբութեան հետեւեցին այն սարսափելի, զազանային կոտորածը և ապա ամբողջ գաւառի աւերումը, այդ օրից հազարաւոր անմեղ զոհեր՝ ստիպւած թողնցին փլատակների մէջ ընկնուած իրենց ծննդավայրը և մերկ, քաղցած՝ ընկան Տարօնի և Էրզրումի գաւառները մի կողմ հաց ծարեղու: Ի՞նչ կարող էին գտնել խեղճերը այնտեղ, ուր սուլթանի տգորով ծառաները երկար ու ճիգ տարիներ ընթացրում ծծել, քամել էին ամեն ինչ: Բայց եւ այնպէս թըշուառ հայաստանցին սիրով քաժանեց իր վերաւորեալ տառապելաւ եղբոր հետ իր օրւայ պատառը:

Այժմ բազմաթիւ թշուառութիւնների, ցաւերի վրայ աւելանում է մի ուրիշը, որպէս ընական հետեւանք Տաճկահայաստանում տիրող իրկի ներկայ դրութեան. դա սովն է, որ սպանում է տանջուած ժողովուրդին կրկին և կրկին զոհեր տալ...

Ի՞նչ է անում մի այսպիսի զգեստամուս մեր հարուստ, աշխարհի բոլոր բարեքները վայելող դասակարգը:

Մինչ արդարասանման ամբողջ մասուլք միաձայն բողոքի շանթեր է արձակում հայաստանում տեղի ունեցող բարբարոսութիւնների դէմ, մինչ նա վրէժխնդրութեան և զթութեան հրուէր է կարդում. զովանդակ քաղաքակրթւած աշխարհին, մինչ հազար մղոններով հերու Անգլիայում՝ յանձնաժողովներ են կազմւում, դրամական և այլ տեսակ ներդատութիւններ հաւաքում, որպէս զի օգնութեան ծնոց կարկառին մի հարստահարւած ազգի ապագայի, քունդից մեռնող գաւառներին, - այս ժամանակամիջոցին մեր հարուստներն ևս յանձնաժողովներ են կազմում, նրանք ևս ներդատութիւններ են անում. եւ զուարթում և ի՞նչի համար, ի՞նչ նպատակով: Կարծում էք, որ ապստամբ ժողովուրդի համար գէնք պիտի գտնուի. ոչ, նրանք հեռու են, շատ հեռու մի այլ տեսակ քաջագործութիւնից. կամ գուցէ անպատւած, թափառութեան մատնւած սասունցիների ներթապէս օգնելու: Դարձեալ ոչ: Այդ գումարները ուրիշ աւելի բարձր, վե՛ր գործերի համար են ժողովում: Փոխանակ իրենց թշուառ մերկ, սոված եղբայրներին գոնէ նիւթական օգնութիւն հասցնելու, մեր հարուստները երազանակ հազարներ են ներկում... Եւ ընդունում, ընդունում են մեր վերաբարւորները ազգից ստալարկւած այդ մեծ գումարները, հայցում, հաւաքում են

ալ ու ծախ, կլարւմ ժողովուրդը «յօգուտ սովեալ եղբար», «յօգուտ Եւրոպայ»: Բայց, երօք, ոչ մի փոքրիկ օգնութիւն անգամ սովամահ տանջողներին: Եւ մինչ այստեղ՝ Տաճկահայաստանում սովի զոհ են գնում ամբողջ ընտանիքներ, բնաբարւում, հալածւում, - այստեղ մեր վերաբարւորները հանգիստ կընծով, անամթաքար վայելում են սովալների անունով ժողոված հասարակական գումարները...

Անխիղճներ, գոնէ օրինակ մերցնէք սնուցիւցներեց:

ՆՆԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Ապառաժից 500 ռուբլի, Գ-ից 104 ռուբ., Կորաշէնից 100 ռուբ., Բ-ից 1300 ռ., տիկին Խ-ից 100 ռուբ., Արամից 170 ռ. 10 կ., Խ. ուս. գ-ից 16 ռ., Իբիսից (Հ-ն) 100 ռուբլի:

«Վրէժից» 5 ատրճանակ, 8 մեքենայ (գ. փ.), 1 մեքենայ (գ. Թ.) և 1 մեքենայ (պ. հ.), Աղեղից 50 պատրօնդաշ:

Արշակաւան քաղաքի կեդրոնական սնդուկի մէջ ստացւեցան.

Վ. Կայծակ 207 դահեկան, Հ. Յ. Գ. Յ. 20 դահ., Սա. 56 դահ., Մեղրիկ 40 դահ., Արտաշէս 60 դահ., Պիծակ 20 դահ., Արշակունեան 85 դահ., Մ. Գ. Վարդ. 85 դահ., Գեղամ 20 դահ., Գիսաւոր 70 դահ., Հուր 50 դահ., Անընթեռների 40 դահ., Զրկէժ 40 դահ., Ընկերասէր 40 դահ., Պարութ 100 դահ., Թաթոս 30 դահ., Անձնէր 60 դահ., Քրդակուլ 60 դահ., Տաւրեան Գայլեր 50 դահ., Փոթորիկ 30 դահ., Սիրունի 20 դահ., Ն. Մէլիք 30 դահեկան:

Վրիպակներ. — Անցեալ №-ում կրկին անգամ են տպագրւել «Ճառագայթից 150 ռ., Գետաշէնից 15 ռ., Ապառաժից 1000 ռ.» որոնք արդէն գետեղւած են եղել № 6-ում:

Անցեալ համարում գետեղած Համիդիէի և կանոնաւոր զօրաց կիսաբաժինների հրամանատարի փոխանորդի պաշտօնական գրութեան մէջ սպորւել է մի խոշոր սխալ. փոխանակ «հայրարանցի աշիրէթի քրդերը» տպագրւած է «հայաստանցի և այլն»:

Ի դէպ. տեղի խիստ սղութիւնը մեզ չէ ներում հակառակ մեր ցանկութեան, տալ վերոյիշեալ պաշտօնական գրութեան մասին մեր խոստացած պարզաբանութիւնները. ստիպւած ենք ինչպէս այս, նոյնպէս և ուրիշ բաներ կամ թողնել կամ յետաձգել:



Այս համարին կցւած է Դժոխքի նամակը, իբրև յաւելւած: Սոյն նամակի միւս օրինակը հեղինակը ուղարկել է «Հնչակին»:

Դաշնակցութեան անձանցներից եմբարում է թղթակցութեան և ներատուութեան համար դիմել:

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան

յՕԿԿ^{սա} 95 Մայիս 2.

Ազոուց անտի հայ յեղափոխական գործի մէջ նշմարելի էր անձնական կրից և ետական փառաց արդիւնք եղող ահագին վնասները, հայ հասարակութեան շահերին, նորա կենսական հարցերին: Ժողովրդի քաղաքական, տնտեսական և բարոյական հալածանաց ներկայ ժամանակ, փոխանակ այդ եսը կորչելու և անհետանալու յօգուտ ժողովրդի, գնալով աւելի և աւելի հսկայական կերպարանք կստանայ, որով այն եղբակացութեան կը յանգիմք, որ այդ արեան հեղեղում, ժողովրդի ներկայ օրհասի մէջ, կուսակցական բաժանմունքը, անձնական կրքերէն բոլորովին, ետական փառքը, ժողովուրդը կը տանի յաւիտենական կորստի գուրբ... Մինչ ցարդ լռելուս պատճառը՝ միայն այն յոյսն էր, որ այդ ձիւղերը իրենց փոքր դրութեան մէջ արմատախիլ պիտի լինին. դժբաղտաբար, այդ յոյսը ի դերե ելնելով, այսօր յարմար ժամանակը կը գտնեմ բացադրելու և հայ հասարակութեան առջև բաց անելու մի գըլխաւոր կէտի մասին. մեր հայացքն ու զգացումները: Իբրև նմոյշ վեր կառնեմ այն կէտն որ մի քանի ամիսներէ ի վեր հայ յեղափոխական կուսակցութեանց միջև ի զուր վիճարանութիւններ և զբարտութիւններ յառաջացուցած է. մինչ ցարդ լռելուս պատճառը, խորին զգւանքս և ի սրտէ վիշտս էր, իսկ այսօր երբ այլ ևս ոտս կը դնեմ ժողովրդի ցաւոց մասնակից լինելու ուղիի վերայ, խիղճս կը հրաւիրէ ինձ այլ ևս արհամարհական լռութիւնը ի բաց թողուլ և պաշտպանել բարոյական կէտ մը, որն արդէն լռութեամբ խորհողի մը առջև պարզ և մէկին է...

Ես մօտէն գիտակից լինելով անմահանուն Պ. Մուրատի գործունէութեան և մասնակից, ըստ կարեաց, նորա ձեռնարկներին, մեր հարիւրաւոր փորձերով համոզուեցանք որ կուսակցական բաժանմունքը, երբ այդ յառաջ կուգայ իբրև հետևանք գաղափարների արմատական տարբերութեան, երբ կուսակցութիւնը կը պայմանաւորուի մի ու է հասարակական հարցի կամ երևոյթի մասին, տարբեր աշխարհայեցողութիւնից, ժողովրդի խաղաղ ժամանակին, անբարոյականութիւնները՝ բարոյականութիւնից զտող, ճշմարտութեան արտայայտիչ, և ժողովրդի քայլերը յառաջ տանողն է, իսկ յեղափոխական գործի մէջ, պատերազմի դաշտում, ժողովրդի ներկայ դրութեան և իրերի այս տաղնապալից վիճակի մէջ, մանաւանդ երբ չկայ գաղափարի տարբերութիւն, երբ հիմնաբար՝ երկու կողմից էլ՝ մարդկանց նեղ եսի մէջ է կայանում, այդպիսի կուսակցութիւնները ժողովրդի հիմը քանդող ու տապալողն են... Այդպիսի կուսակցութիւններն են, որ զուգապատիւ են ժողովրդի իրական շահուց դաւաճանութեան...

Այսօր պ. Մուրատը, ժողովուրդական այդ հերոսը, բանտի անկիւններ կը տքնի, բայց ես ազատ լինելուս համար, անհրաժեշտ պարտք կը զգամ. նորա լայն հայացքները չը ծածկել ութ անկիւններում, ըստ բարոյական պէտք չը մեռնել նորա զգացումները, որ ժողովրդի իրաւանց պաշտպանութեան նուիրուած էր: Նա ժողովրդի ցաւերը իւր կաշիի վրայ կրելով, դարձաւ ժողովրդի արդար շահուց արդար պաշտպան, նա իւր կեանքը նուիրեց ժողովրդի արդար դատին և ո՛չ այս կամ այն

կուսակցութեանց ետական փառքին... Նոյնը և ամեն մի աղնիւ գործողի պարտականութեանց այդ ուրեքն պէտք է լինի: Ժողովրդի անմիջական շահն կը պահանջէր և միշտ կը պահանջէ, ընդ հանուր ուժերի միացում: Ինչո՞ւ... Որովհետև թշնամին (չձածկեմք) ուժեղ է, համեմատաբար խիստ ուժեղ: Եւ այդ նպատակաւ էր, որ այդ հերոսը, թէ մասնաւոր անհատների և թէ գաղափարակից ընկերների հետ միացած իւր ամեն ջանքն չէր խնայէր ձեռք բերել այդ ցանկալի նպատակի իրագործումը: Թէ ինք Մուրատը և թէ ես՝ դրդեալ այս և շատ մը երկար և արդար պատճառներից, մեք մեր թղթակցութիւնները կուղարկէինք երկու կուսակցութեանց ևս, մեզ ցանկալի էր, որ եթէ լինէր տանաւոր յեղափոխական թերթեր նոյն ծրագրով նոյն գործին նուիրուած բողոքի մէջն էլ նոյն թղթակցութիւնները հրատարակուած տեսնել ո՛չ թէ մեր ետական փառքի համար, այլ ժողովրդի անտանելի ցաւերը շատ թուով մարդկանց ականջին հասցնելու և գիտակից դարձնելու համար:

Թող այդ կուսակցութիւններէն ամեն մէկը իւր խղճին հարցանէ թէ արդեօք այդ կուսակցական բաժանմունքը չէր գլխաւոր և բուն պատճառը Մասնոյ մը աւերակաց տակ ծածկուելուն, և անշուշտ այդ անձնական կրից և կուսակցութեանց այսպիսի վտանգաւոր հետևանքները մեզ դիտել կուտար և պիտի տայ, որ ուրեմն դուք, կուսակցութիւններդ անխղճաբար ժողովրդի ոչխարի պէս մորթուելուն և նորա անարատ արեան հեղեղի պէս թափուելուն վրայ հանդիսատես լինելով հաճոյք մը կզգաք: Դուք, կուսակցութիւններդ, ի բաց թողած ժողովրդի դրական ուժի կեդրոնացումը և նորա կենսական պետքերը, անձնական մանրակրկիտ հաշիւներով զբաղուած էք: Կարծեմ անկեղծ գործողի մը խիղճն հանգիստ կը լինի այն ժամանակ, երբ մինչև իւր կենաց վերջին կաթիլ իւր ամեն ջանքն, քիրտն ու արիւնն նուիրած է հասարակութեան ընդհանուր շահերին և ո՛չ ետական ձգտմանց, անձնական հաշուոյ ևն ևն: Արդեօք այլ ևս ինչ կը նշանակէ ձեր այդ երկայն ճառեր ու խմբագրականներ, կարծես գրելու նիւթ բնաւ չը լինէր... Մենք այսչափ նահատակ ենք ունեցել, որ յորջակ անուն մի թերթ գրական գողութիւն է արել, որ Մեր նամակները ու թղթակցութիւնները իւրացրել են ևն: Դա բարոյական մահ է. նա մանաւանդ այն պատճառով որ Է-ի կուսակցութիւնը լաւ գիտէր ու չէր կարող չը գիտնալ որ թղթակցութիւնները չեն գողացուած, չեն իւրացուցած. քանի որ այդ կէտն լաւ ևս յայտնի էր ՝ Ատրպատականի և Աովկասի ներկայացուցչին...:

Եւ մեր նպատակն է ո՛չ մի միայն թշուառութեան մատնուած ժողովուրդը թուրքի վայրենութիւններէն ազատել, այլ նոյն իսկ թէ ֆիզիքական և թէ բարոյական բռնութիւնների դէմ բողոքել...

Թող պարծի ինքը ժողովուրդը, թող հանգստանայ ժողովրդի խիղճը, թող նայի իւր աքսորեալ, բանտարկեալ որդեց, թող աչքը յառէ դէպ ի կախաղաններ, դէպ ի Հայաստանի հովիտն ու ձոր, ահա այնտեղէն է, որ ժողովրդի արեան գոլորշին այրուած տուններու ծխոյն հետ խառնուելով հայ յեղափոխական գործի ղեկավարների գլխի շուրջը կամար կապած, բողոք և լուսանք

կը տեղայ...

Բաւական է, պարոններ, բաւական է, ժամանակ է զգալ ձեր տմարդի ընթացքը: Ժամանակ է զգալ, որ Սասունի 10,000 նահատակների ձեռքին, 8-10 հրացան միայն տարու կարողութիւն ունեցող մի կազմակերպութեանը՝ ինք զինքը փիղ նկարել, իսկ Սասունի բարձունքը քանդող, աւերող ամենի գազաններին՝ քթթով, դա՛ միայն ծաղրածունների գործ է: Քթթով է նկարուած նաև դաշնակցութիւնը, որը՝ եթէ քիչ էլ է գործել, գոնէ համեստութիւն է ունեցել չը գոռալու ընթերցողների ահանջը խլացնելու չափ: «Մե՛նք զարկինք», «մե՛նք ջարդեցինք»... «Մե՛նք»... շարունակ՝ «մե՛նք»...

Եւ դու, Հայ Յեղափոխակ, Դաշնակցութիւն, որ ինք զինքդ կը յորջորջես այդ խոշոր բառերով արդեօք խոջի խայթ չե՞ս զգար, երբ Մուրատի երեսին փակեցիր քո դուռը, անօգնական թողիր նրան, միայն այն պատճառով որ նա պատկանում էր Հնչակեան խմբին, այսինքն առիթ չէր ունեցած քեզ հետ անձամբ ծանօթ լինելու: Եւ թողիր դու, որ նա դատարկաձեռն դառնայ ապագայ — այսօրուայ ողբերգութեան տեղը... Միթէ զայդ կը պարտաւորեցնէր քեզ, քո «Դաշնակցութիւն» մեծահնչուն անունը: Ո՞րտեղ է, ուրեմն քո «դաշինքը», ո՞ր է քո կոչման բարձրութեան վրայ գտնւելը, երբ յեղափոխականների լաւագոյնի կարկանձ ձեռքում... քար միայն դրիր հացի տեղ...

Շնորհակալութիւն գաւառներին... Նորա գիտցան բուն դաշնակցական լինելը, նորա գրկաբաց ընդունեցին վշտացած հերոսին իւր ընկերներով, և նա մոռացաւ ձեռնից ստացած վերաւորանքը, մոռացաւ նա, որովհետև սիրտը լի էր իսկական սիրով, սիրով դէպ ի թշուառ ժողովուրդը, որը իրեն կապատէր... Այո, անմահ Մուրատի «Մեղքը» միայն անոր մէջ կը կայանար, որ նա «անպայմաններիցը» չէր: Անպայման Հնչակական է պահանջում լինել՝ Հնչակը, այսինքն գիտնալ բոլոր Դաշնակցականներին՝ գրական ահանջ գողեր, աւազակներ անուանել, գիտնալով հանդերձ, որ դա՛ զրպարտութիւն է, ստոր զրպարտութիւն...

Անպայման Դաշնակցական լինել է պահանջում նաև Դաշնակցութիւնը, այսինքն հայհոյել Հնչակականներին աջ ու ձախ, չը խնայելով նոյն իսկ Տամատեաններին, Մուրատներին, գիտնալով հանդերձ, որ նորա հերոսներ էին... Բաւական է...

Ի՞նչ ունիք բաժանելու եղբարք... Փա՞ռք... Թողէ՛ք, դա՛ Տամատեաններին և Մուրատներին, Վարդաններին և Մարգարներին, Չաքարեաններին և Լեոններին — նաև Արապոսներին է սեփհական... Դրամ... 2% որ Վազարոսի պէս աղքատ էր երկուսդ էլ: Համեմատելով գործի յանձնու մեծ պահանջների և անմիջական կարիքների հետ:

Ի՞նչ ունիք, ի՞նչ... Ո՞րն է այն գաղափարը՝ որը ձեզ ի միմեանց կը շոյէ, ի՞նչ կէտի վրայ է ձեր հասկացողութիւնների մէջ եղած տարբերութիւնը, որ դուք ձեր ողորմելի ոյժերը միացնելու տեղ կը ջլատէք, և ձեր պաշտպանութեան յանձնուած թշուառ ժողովուրդի տուրը հիմնա յատակ կը տապալէք...

Ամօթ է յանցանք է...

Դ ժ ո խ ք

Մայիս ամսոյ մէջ Հ-ի և Դ-ի կուսակցութեանց Մուրատի և իմ հայեացքները պարզած եմ մի յօդուածով՝ զոր զրկած եմ երկու թերթերին էլ: այսպէս թէ այնպէս ի մտոյ գիտակցից լինելով ճշմարտութեան, նոյն յօդուածի մէջ գրուած մի քանի կէտերու մասին կանեմ հետևեալ դիտողութիւնները...

Ա. Ծանօթանալով Դաշնակցութեան Ծրագրի ապակեղորոնացման, ճշմարտութեան դէմ մեղանչած կը լինիմ, մեղադրել ամբողջ Դաշնակցութիւնն՝ Մուրատին ձեռք չը կարկառելու առթիւ, քանի որ միայն Տ...-ի խումբը մերժել է նրան իբր անպայման Հնչակեանի...

Բ. Դաշնակցականները՝ կուսակցական լինելով մեկտեղ, նրանք հայհոյում են Հ-ի կեղծոնին, խմբագրութեան, և անձնական կրքերից կուրացած Պօռտախօսներին, մինչդեռ կը յարգեն բոլոր անձնուրաց գործիչները՝ խոստովանելով որ նրանք հերոսներ են:

Դ ժ ո խ ք

Ծանօթութիւն

Իսկապէս արժէր կանգ առնել Դժոխքի նամակի մի քանի կէտերի վրայ, որոնք ուշադրութեան արժանի են, օրինակ՝ «ոչ մի գաղափարական տարբերութիւն չկայ և այլն» խօսքերը, կամ թէ այն տեղը, որտեղ հեղ կուսակցական բաժանումներին է վերագրում Սասունի աւերակների տակ ծածկելը և այլն: Բայց արդէն «Դրօշակի» № 2-դում ասել ենք, որ ներկայ սոսկալի շրջանում չենք կարող զբաղւել այդպիսի հերքումներով և այլն: Եթէ մենք ապագում ենք Դժոխքի նամակը, դա՛ թէ ճշմարտութիւնը երևան հանելու համար է և թէ նորից «Հնչակի» երեսին խիեղու իւր խաբբայութիւնը և կեղծիքը, որովհետև Դժոխքի առաջին նամակը լոյս տեսնելուց յետոյ նա փոխանակ ամօթից լուելու՝ շարունակեց անամօթաբար իւր հին երգը երգել...

Մի բան միայն մենք անհրաժեշտ ենք համարում ասել, որ Դժոխքի ներկայ գրութիւնից և լրացուցիչ բացատրութիւնից աւելի է պարզում մեր յարաբերութիւնը Մուրատի հետ, փաստը նրանումն է, որ Տ. կօմիտէն մերժել է նրան օգնել իբրև անպայման հընչակեանի: Ծիծաղելի է սրա մէջ որ և է յանցանք նկատել. ի՞նչպէս կարելի է պահանջել մի կազմակերպութիւնից, որ նա օգնի մի անհատի, երբ այդ անհատը լինելով անպայման կուսակցական, չի կամենում ոչ մի հաշիւ տալ իր գործունէութեան մասին և գտնել ընկերական փոխադարձ յարաբերութեան մէջ: Դաշնակցութիւնը պատրաստ է օգնելու բոլոր այն այլ կուսակցութեանց պատկանող անհատներին ու խմբերին, որոնք տարբերելով մեզանից տեսական մի քանի հայեացքներով գործնական ասպարեղում կը գործեն մեզ հետ համերաշխ կերպով և կը գտնուին մշտական ընկերական յարաբերութեան մէջ: Երբ միւս կօմիտէները հենց այդ պայմանով են համաձայնուել օգնել Մուրատին և եթէ Մուրատը ներկայանար նրանց այնպէս ինչպէս Տ. կօմիտէին, այսինքն իբրև անպայման հնչակեան, ոչ մի դաշնակցական կօմիտէ չէր համաձայնուել նրան օգնել:

Դ ժ ո խ ք